




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3557

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՄՅՈՒՐԳԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրակտիկեի բոլոր յերկրանքի — միացե՛լ :

ՈՍԿԱՐ ՈՒՄԵԼԳ

ՍԱԼՈՄԵ

Իրանի մի առարկ

Քաղաքի քաղաքի

ՀԱՅԱՍՏԱՆԻ



82

ՈՒ-13

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ № 52

Կ. ՊՈԼԻՍ 1928

№ 52 ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ № 52
Կ. ՊՈԼԻՍ 1923

[illegible]

10.09.2013

2557

ՈՍԿԱՐ ՈՒԱՅԼԴ

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Մ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ
Կ. ՊՈԼԻՍ


ՍԱԼՈՄԵ

Դրամա մի արարով



5362-55

22-22-55



ԱՆՁԵՐ

Հերոզդ Անտիպա — տետրարք Հրեյաստանի:

Յոքանաան — մարգարե:

Յերիտասարդ սիրիյացի — Թիկնապահների
հրամանատար:

Տիգելին — յերիտասարդ հոռմայեցի:

Կապադոկիյացի:

Նուբիյացի:

Առաջին զինվոր:

Յերկրորդ զինվոր:

Հերոզդիյադայի մանկլավիկը:

Հրեյաներ, նազովրեցիներ, յեվայլն:

Ստրուկ:

Նաաման — դահիճ:

Հերոզդիյադա — տետրարքի կինը:

Սալոմե — Հերոզդիյադայի դուստրը:

Սալոմեյի ստրկուհիները:



Բ Ե Մ՝

Հանդիսարանին կից մի մեծ պատշգամբ Հերովդի պալատում: Ձինվոր-
ները կանգնել են պատշգամբի վանդակապատին հենված: Աջ կողմը՝ մի
մեծ սանդուխտ: Չախ կողմը, բեմի խորքում մի ջրհոր, շրջապատված
կանաչ, բրնձղյա պատով: Լուսնի լույս:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Վորքան չքնաղ ե այս յերեկո արքայադուստր Սա-
լումեն:

ՀԵՐՈՎԴԻՅԱՆԱՅԻ ՄԱՆԿԱՎԻԿԸ

Նայեցեք լուսնին: Վորքան տարրերինակ տեսք ունի
լուսնյակը: Կարծես մի կին ե, վոր գերեզմանից ե
յեղնում: Մեռած կնոջ ե նման: Կարծես մեռել ե
վորոնում նա:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Շատ տարրերինակ տեսք ունի: Նա նման ե մի
փոքրիկ արքայադուստր, վոր դեղին քող ե ծածկում
յեղ վորի վոտներն արծաթից են: Կարծես նա մի արքա-
յադուստր ե, վորի վոտները սպիտակ աղափնյակների
յեն նման: Կարծես նա պարում ե:

ՀԵՐՈՎԴԻՅԱՆԱՅԻ ՄԱՆԿԱՎԻԿԸ

Նա նման ե մեռած կնոջ, շատ դանդաղ ե
շարժվում:

Աղմուկ հանդիսարանում

ԱՌԱՋԻՆ ՋԻՆՎՈՐ

Վորքան աղմկալի՜ յե: Ո՞վքեր են այդ գազանները,
վոր վռնում են:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Հրեյաները: Նրանք միշտ այդպես են: Իրենց կրոնի մասին են վիճում նրանք:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Ինչո՞ւ յեն վիճում իրենց կրոնի մասին:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Ձըգիտեմ: Նրանք միշտ այդպես են անում: Որինակ փարիսեցիները պնդում են թե հրեշտակներ կան, իսկ սադուկեցիներն ասում են, թե չկան:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Ինձ թվում է, վոր ծիծաղելի չե այդպիսի բաների մասին վիճելը:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Վորքան չքնաղ ե այս յերեկո արքայադուստր Սալոմեն:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱՅԻ ՄԱՆԿԱՎԻԿԸ

Դուք անդադար նրան եք նայում: Դուք շատ եք նայում նրան: Պետք չե մարդկանց այդպես նայել... Կարող ե զժքախտություն պատահել:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Այնքան չքնաղ ե նա այս յերեկո:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Տեսարարքը քնկոտ տեսք ունի:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Այո՛ նա ի քնկոտ տեսք ունի:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Նա մի բանի՛ յե նայում:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Նա մեկի՛ն ե նայում:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Ու՞մ ե նայում նա:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Չգիտեմ:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Վորքան գունատ ե արքայադուստր: Յիս յերբեք նրան այդքան գունատ չեմ տեսել: Նա նման ե սպիտակ վարդի ցոլքին, վոր յերեկվում ե արծաթյա հայելու մեջ:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱՅԻ ՄԱՆԿԱՎԻԿԸ

Նրան չպետք ե նայել: Դուք նրան շատ եք նայում:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Հե՛րո լիլյազան լցրեց տետրարքի գավաթը:

ԿԱՊԱԴՈԿԻՅԱՅԻ

Դա Հերովիլյազա թագուհին ե, նա, վորի գլխին մարգարտաշ օր սե/թագ կա, վորի մագերին կապույտ փռչի ե ցանաժ:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Այո, դա Հերովդիադան է: Տեղաբերի կինն է դա:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Տեղաբերը գինի շատ է սիրում: Նա յերեք տեսակ գինի յե պահում — մեկը, վոր Սամովրակ կղզուց է գալիս՝ ծիրանափառ է, վորպես կեսարի վերարկուն:

ԿԱՊԱԴՈԿԻՑԱՅԻ

Յեա կեսարին յերեք չեմ տեսել:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Մյուսը, վոր Կիպրոս կղզուց է գալիս՝ դեղին է, վորպես վոսկի:

ԿԱՊԱԴՈԿԻՑԱՅԻ

Յեա վոսկի շատ է սիրում:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Յերրորդը՝ Սիցիլիայի գինին է: Այդ գինին կարմիր է, վորպես արյուն:

ՆՈՒՐԻՑԱՅԻ

Իմ յերկրի աստվածներն արյուն շատ են սիրում: Տարին յերկու անգամ մենք զոհ ենք բերում նրանց պատանիներ յեվ կույսեր՝ հիսուն պատանի յեվ հարյուր կույս: Բայց յերեվի մենք նրանց յերեք չենք զոհացնում, վորովհետեւ՝ նրանք շատ են խառատիրտ դեպի մեզ:

ԿԱՊԱԴՈԿԻՑԱՅԻ

Իմ յերկրում այժմ արդեն աստվածներ չկան:

Հռոմայեցիները նրանց արտրել են: Ասում են, վոր նրանք սարերում են ապաստան գտել, բայց յեա դրան չեմ հավատում: Յեա սարերում յերեք գիշեր անց կացրի յեվ ամեն տեղ վորտեցի նրանց, բայց չգտա: Վերջապես յեա սկսեցի նրանց անունները տալ յեվ բարձրաձայն կանչել, բայց նրանք չհայտնվեցին: Ինձ թվում է, վոր նրանք մեռել են:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Հրեյաները պաշտում են մի աստված, վորին չի կարելի տեսնել:

ԿԱՊԱԴՈԿԻՑԱՅԻ

Դա ինձ համար անհասկանալի յե:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Առհասարակ նրանք անտեսանելի բաների յեն հավատում:

ԿԱՊԱԴՈԿԻՑԱՅԻ

Դա շատ ծիծաղելի յե թվում ինձ:

ՅՈՒԲԱՆԱՆԻ ԶԱՅՆԸ

Ինձնից հետո գալու յե մի ուրիշը, վոր ավելի զորավոր է, քան յեա: Յեա արժան չեմ անգամ նրա կոշիկների կապերն արձակելու: Յերբ նա գա՝ անապատը պիտի ցնծա: Անապատը պիտի ծաղկի, վորպես շուշան: Կույրերի աչքերը լայս պիտի տեսնեն յեվ խուլերի ականջները պիտի բաց յեն: Նորածին մանուկը վիշապների բնին պիտի դնե իր ձեռքը յեվ առյուծներին, բաշերից բռնած՝ պիտի տանի:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Ստիպեցեր, վոր լո՛ւս դա: Դա միշտ անմիտ բաներ ե
ասում:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Վո՛չ, նա սուրբ մարդ ե: Յե՛ւ շատ անուշ մարդ ե
նա: Յեա նրան ամեն որ կերակուր եմ տանում: Նա
միշտ ինձ շնորհակալություն ե հայտնում:

ԿԱՊԱԴՈԿԻՑԱՅԻ

Ո՞վ ե նա:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Նա մարգարե յե:

ԿԱՊԱԴՈԿԻՑԱՅԻ

Անունն ի՞նչ ե:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Յոքանասն:

ԿԱՊԱԴՈԿԻՑԱՅԻ

Վորտեղի՞ց ե յեկել:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Անապատից, ուր նա մորեխներով ու վայրի մեղրով
եր սնվում: Նա ուղտի ստե՛վ եր հագած յե՛ւ մեջքին
կաշվե գոտի ունե՛ր: Շատ վայրի եր նրա տեսքը:
Խուռն ամբողջը հետևելում եր նրան: Նա ունե՛ր յե՛ւ
աշակերտներ:

ԿԱՊԱԴՈԿԻՑԱՅԻ

Ինչի՞ մասին ե խոսում նա:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Մենք չգիտենք: Յերբմն սարսափելի բաներ ե
ասում, բայց անկարելի յե նրան հասկանալ:

ԿԱՊԱԴՈԿԻՑԱՅԻ

Կարելի՞ յե տեսնել նրան:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Վո՛չ, անտրաբը չի թույլատրում:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՑԱՅԻ

Արքայադուստրը հովհարով ե ծածկել իր յերեսը:
Նրա մանրիկ, սպիտակ ձեռներն այնպես են շարժվում,
կարծես դեպի աղավաճառուն թռչող աղափայակներ
լինեն: Նրանք ճերմակ թիթեռների յեն նման: Ի՛սկ
յե՛ւ ի՛սկ ճերմակ թիթեռներ լինեն, կարծես:

ՀԵՐՈՎԴԻՑԱԴԱՅԻ ՄԱՆԿՎԱԿԻԿԸ

Բայց ձեզ ի՞նչ: Ինչո՞ւ յեր նայում նրան: Չպետք ե
նայել նրան: Դժբախտություն կարող ե պատահել:

ԿԱՊԱԴՈԿԻՑԱՅԻ Ջրորը ցույց տալով

Ինչ տարորինակ բանա ե:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Դա մի հին ջրհոր ե:

ԿԱՊԱԴՈԿԻՑԱՅԻ

Հին ջրհոր: Յերեկի անառողջ տեղ ե:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Վոչ: Որինակ տետրաբքի յեղբայրը, նրա մեծ յեղբայրը, Հերովդիսադա թագուհու առաջին ամուսինը 12 տարի փակված էր այդտեղ յեղ զրանից չմեռավ: Վերջը պետք յեղավ նրան խեղդամահ անել:

ԿԱՊԱԴՈԿԻՅԱՅԻ

Խեղդամահ: Ո՞վ համարձակվեց այդ անելու:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ Յայց տալով դո՞՞՞ն, վոր մի հեկա նեղր և

Սա, Նաամանը:

ԿԱՊԱԴՈԿԻՅԱՅԻ

Յեղ չվախեցավ:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Վոչ: Տետրաբքն ուղարկել էր իր մատանին:

ԿԱՊԱԴՈԿԻՅԱՅԻ

Վո՞ր մատանին:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Մահվան մատանին: Յեղ զրա համար ել սա չեք վախենում:

ԿԱՊԱԴՈԿԻՅԱՅԻ

Բայց յեղ այնպես մի թագավոր խեղդե՞լ՝ սարսափելի յե:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Ինչո՞ւ: Թագավորներն ել միայն մի վիզ ունեն, ինչպես յեղ մյուս մարդիկ:

ԿԱՊԱԴՈԿԻՅԱՅԻ

Ինձ սարսափելի յե թվում այդ:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Արքայադուստրը վեր և յեկնում: Նա հեռանում և սեղանից: Սաստիկ թախծոտ և նրա դեմքը: Ահ, նա այստեղ և գալիս: Այո՛, նա մեզ մոտ և գալիս: Վորքան գունատ և նա: Յես յերբեք նրան այդքան գունատ չեմ տեսել:

ՀԵՐՈՂԴԻՅԱԴԱՅԻ ՄԱՆԿԱՎԻԿԸ

Մի նայեք նրան: Յես ձեզ խնդրում եմ, վոր չնայեք նրան:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Նա մոլորված աղավաղ յե նման: Նա նման և մի նարգիսի, վոր տատանվում և հողմի առաջ: Նա արծաթյա ծաղկի յե նրման:

Մանուկ և Սալոմե

ՍԱԼՈՄԵ

Յես այնտեղ չեմ մնա: Յես չեմ կարող մնալ: Ինչո՞ւ յե տետրաբքն իր խլուրդի աչքերով, դողդոջուն արտեվանունքների տակից նայում ինձ: Տարորինակ և, վոր իմ մոր ամուսինն ինձ այդպե՛ս և նայում: Յես չգիտեմ զրանով ի՞նչ և ուզում ասել: Վոչ, յես այդ գիտեմ:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Դուք թողիք խնճույքն ու յեկաք, արքայադուստր:

ՍԱԼՈՄԵ

Վորքան թա՛րմ և այստեղ ողբ: Վերջապես այստեղ կարելի յե շունչ քաշել: Այնտեղ, ներսը Յերուսաղեմի

հրեյաներն են գզգզում իրար իրենց ծիծաղելի ձեւերի համար յեւ բարբարոսները, վոր անդադար խմում են գինին ու հատակի սաւերին թափում: յեւ զմյուռնացի հոյնները՝ ներկած աչքերով: նշխած ծնոտներով յեւ ողակ-ողակ զանգրացրած մազերով: Յեւ յեզիպտացիները, վոր լուռ են ու խորամանկ, իրենց աշմյա յեղունգներով յեւ շագանակագույն վերարկուներով: Յեւ հոռմայեցիք իրենց կոպտությամբ, ծանր շարժ-վածքով ու հայհոյանքներով: Ահ, ինչպէս ասում եմ յես հոռմայեցիներին: Դրանք ռամիկներ են վոր իրենց իշխան են ձեւացնում:

ՅԵՐԵՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Արդյոք չեյի՞ք կամենա նստել, արքայադուստր:

ՀԵՐՈՎԻԹԱԴԱՅԻ ՄԱՆԿԱՎԻԿԸ

Նրա հետ ինչո՞ւ յեք խոսում: Նրան ինչո՞ւ յեք նայում: Ո, դժբախտություն կպատահի:

ՍԱԼՈՄԵ

Ինչ լա՛վ ե նայել լուսնին: Նա արծաթյա դրամի ե նման: Կարծես մի փոքրիկ արծաթյա ծաղիկ ե: Նա սառն ե յեւ վողջախոհ՝ լուսինը: Յես հալատացած եմ, վոր նա կույս ե: Նա կույսի գեղեցկություն ունի: Այո՛, նա կույս ե: Նա իրեն յերբեք չե ապականել: Նա բնավ անձնատուր չե յեղել մարդկանց, ինչպես մյուս դիցուհիները:

ՅՈՔԱՆԱՆԻ ՁԱՅԸ

Յեկել ե նա, Տերը: Յեկել ե Մարդո Վորդին: Հուշկապարիկները թաղնվել են գետերում յեւ ջրա-

5362-55

հարսները թողել գետերն ու պահել են տերեւներէ մեջ. անտառներում:

ՍԱԼՈՄԵ

Այդ ո՞վ եր աղաղակեց:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Դա մարգարեն եր, արքայադուստր:

ՍԱԼՈՄԵ

Ահ, մարգարեն, նա՛, վորից տետարքն այնպես վախենում ե:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Մենք փոչինչ չգիտենք, արքայադուստր: Դա Յոթա-նաան մարգարեն ե:

ՅԵՐԵՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Յեթն կամենում եք, արքայադուստր, յես կհրա-մայեմ, վոր ձեր գահափորակը բերեն: Այգում այնպես լա՛վ ե վոր:

ՍԱԼՈՄԵ

Նա սարսափելի բաներ ե ասում — յեւ այդ իմ մոր մասին ե, այնպես չե՞:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Մենք նրա ասածները չենք հասկանում, արքա-յադուստր:

ՍԱԼՈՄԵ

Այո՛, նա մորս մասին հրեշափոր բաներ ե ասում:



USPDL-4

Արքայադուստր, տնտրարքը խնդրում ե, վոր դուք հանդիսարան դառնաք:

УУЛНУГ

Յեա այնտեղ չեմ վերադառնա:

ՅԵՐԵՍԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Ներկեցեք, արքայադուստր, բայց լինի դուք չվերա-
դառնաք կարող ե ղժբախտություն պատահել:

ՈՒԼՈՒԲ

Ծեփ ե նա, այդ մարգարեն:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Լավ ե վերադառնաք, արքայադուստր: Թույլ տվեք
ձեզ ուղեկցեմ հանդիսասրահը:

ՄԱՂՈՒԷ:

Ծերունի՞ յի աղդ մարգարեն:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Վոչ, արքայադուստր, նա բոլորովին չերխտասարդ և:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Վոչ վոք չգիտես: Վոմանք ասում են թե դա Յեզի-
յանն է:

ՄԱՆՈՄԵ

Ո՞ր է Յեղիշան:

ՅԵՐԿԻՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Այս լերկրի շատ հին մարգարեններից մեկը, արքայադուստր:

УСПОЛЪ

Արդյոք ի՞նչ պատասխան պիտի տամ յես տնտ-
քարքին արքայադստեր կողմից:

ՅՈՒԲԱՆԱԿՆԻ ԶԱՅՆԸ

Մի ցնձա, Պաղեստին յերկիր, վորովհետեւ չնախարազանը, վորով խարազանում եր քեզ՝ կոտորված ե: Վորովհետեւ ոձի սերնդից պիտի ծագե Աքքայոձիկը յեկ դրանից ծնվողը թոչուններին պիտի կլանե:

UNION

Ինչ տարրորինա՜կ ծայն ե: Յևա շատ կուզեյի դրա հետ խոսել:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Վախենում՝ դա անկարելի լինի, արքայադուստր։
Տեսարարքը չի ուզում, վոր դրա հետ խոսեն։ Նա
քահանայապետին անգամ արգելիլ է խոսել դրա հետ։

ՄԱՆՈՄԵ

Յես ուզում եմ խոսելդ դրա հետ:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Դա անկարելի չե, արքայադուստր:

WILLOW

Յեա այդ ուղով եմ:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Արդարեւ, արքայադուստր, ալիլի լավ կլինի հանդիսարան վերադառնար:

ՍԱՆՈՄԵ

Դուրս բերեք մարգարեյին:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Մենք չենք համարձակում, արքայադուստր:

ՍԱՆՈՄԵ մոտենալով ջրն ու յետո՛ւ նայելով

Վորքան մո՛ւթ և այնտեղ: Յերեւի սոսկալի յե լինել մի այդպիսի մի՞ն խորշում: Դա գերեզմանի յե նման: Զխալոյն ջրանցի՞ր ինձ: Դուրս հանեցեք նրան: Յիս ուզում եմ նրան տեսնել:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԻՆՎՈՐ

Խնդրում եմ, արքայադուստր, մեզնից մի պահանջեք այդ:

ՍԱՆՈՄԵ

Դուք ինձ սպասել եք տալիս:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Մեր կյանքը ձեզ և պատկանում, արքայադուստր, սակայն մենք չենք կարող անել այն, ինչ դուք եք պահանջում մեզնից: Վերջապես դուք մեզ չալիսի դիմեք:

ՍԱՆՈՄԵ յերիտասարդ սիրիյացուն նայելով

Ահ...

ՀԵՐՈՎԴԻՅԱՆՅԻ ՄԱՆԿԱՎԱԿԸ

Ո, արդյոք ի՞նչ պիտի պատահի այժմ: Յես համոզված եմ, վոր դժբախտություն կպատահի:

ՍԱՆՈՄԵ յերիտասարդ սիրիյացուն մոտենալով

Դուք այդ կանեք ինձ համար, այնպես չե՞, Նարարթ: Կանեք դուք ինձ համար: Յես ձեզ հետ միշտ բաղք եյի վարվում: Դուք ինձ համար կանեք այդ, այնպես չե՞: Յես միշտն տեսնել եմ ուզում նրան, այդ տարրինակ մարգարեյին: Նրա մասին այնքան են խոսել վոր... յես այնքան հաճախ եմ տեսել տետրարբին նրա մասին խոսելիս: Ինձ թվում է, վոր տետրարբը վախենում և նրանից: Դուք դուք եյ, Նարարթ, գուցե դուք ե՞լ եք վախենում:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Յես չեմ վախենում, արքայադուստր, յես վոչ վոքից չեմ վախենում: Սակայն տետրարբը խստիվ արգելել է այդ գրի խուփը բանարու:

ՍԱՆՈՄԵ

Ինձ համար դուք կանեք այդ. Նորրարթ: Յեվ վաղը, յերբ յես պատգարակի վրա նստած անցնեմ կառքեր վաճառողների դարպասի միջով, գուցե ձեզ համար մի փոքրիկ ծաղիկ ցած նետեմ, մի փոքրիկ, կանաչ ծաղիկ:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Զեմ կարող, չեմ կարող արքայադուստր:

ՍԱՆՈՄԵ ժպտալով

Դուք ինձ համար կանեք այդ Նարարթ: Դուք

շատ լավ գիտեք, փոր կաներ այդ ինձ համար: Յեւ
վաղը, յերբ յես պատգարակի վրա նստած անցնեմ
կառք գնողների դարպասների միջով՝ յես կնայեմ ձեզ
իմ մարմաշ քողի տակից, նարրաբով: Գուցե յես
ժպտամ ձեզ: Նայեցե՛ք ինձ, նարրաբով, նայեցե՛ք ինձ:
Ահ, դուք շատ լավ գիտեք, փոր պիտի անեք այն ինչ
յես խնդրում եմ ձեզնից: Դուք այդ լավ գիտեք,
այնպես չե՞ նարրաբով: Յես լավ գիտեմ:

ՅԵՐԵՍԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ Նշան և անում յերբորդ գնավորին՝

Դուք բերեք մարգարեյին... արքայադուստր Սա-
լոմեն ուզում և տեսնել նրան:

ՍԱԼՈՄԵ

Ահ...

ՀԵՐՈՂԻՅԱՐԴԱՅԻ ՄԱՆԿԱՎՈՐԵՐ

Ո, փորքան տարորինակ տեսք ունի լուսինը: Կար-
ծես մեռելի ձեռք և, փոր իրան ծածկելու համար
պատան և փորոնում:

ՅԵՐԵՍԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Շատ տարորինակ տեսք ունի նա: Կարծես մի
փորքեկ արքայադուստր լինի, փոր սաղաթի աչքեր
ունի: Մարմաշ ամպերի միջից ժպտում և նա, փորպես
մի փորքիկ արքայադուստր:

Մարգարեն ջրորից դուրս և յեկում: Սալոմեն նայում և նրան
ու նետ բաշվում:

ՅՈՒԲԱՆԱՆ

Ո՛ւր և նա, փորի պղծության բաժակը լցված և

արդեն: Ո՛ւր և նա, փոր արծաթյա զգեստով մեռնելու
յն մի որ ժողովրդի առջև: Ասացեք նրան թող գա,
յսե այն մարդու ծայնը, փոր աղաղակում եր անապա-
տում յեւ արքայական պալատներում:

ՍԱԼՈՄԵ

Ո՛ւմ մասին և խոսում նա:

ՅԵՐԵՍԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Հայտնի չե, արքայադուստր:

ՅՈՒԲԱՆԱՆ

Ո՛ւր և նա, փոր տեսնելով պատերի վրա մարդ-
կային պատկերներ, քաղցեյացիների ներկանկար պատ-
կերները տեսնելով, իր ցանկասեր աչքերին հլու՝
Քաղցեյա դեսպաններ ուղարկեց:

ՍԱԼՈՄԵ

Նա մորս մասին և խոսում:

ՅԵՐԵՍԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Վո՛չ, արքայադուստր:

ՍԱԼՈՄԵ

Այո՛, մորս մասին և:

ՅՈՒԲԱՆԱՆ

Ո՛ւր և նա, փոր անձնատուր յեղավ ասորեցոց
զորապետներին, փորոնք իրենց մեջքին գոտի յեն

կապում յեւ գլուխներին խույր են կրում: Ո՞ւր ե նա.
վոր անձնատուր եր լինում յեգիպտացի պատանի-
ներին, վորոնք կտավ են հագնում յեւ ծիրանի ու
վոսկի վահաններ ու արծաթյա սաղափարդներ են կրում
յեւ վորոնք հաղթանդամ են: Ասացեր նրան, թող վեր
յեղն իր պագշոտության մահճից, վորպեսզի լսե այն
մարդուն, վոր Տիրոջ հանապարհն ե պատրաստում:
Ասացեր, թող զոջա: Յեւ յեթե նա չի զոջա յեւ կմնա
իր զարշափործության մեջ, ասացեր նրան թող զա,
վորովնեղով Տերը վերցրել ե արդեն իր խարազանը:

ՍԱԼՈՄԵ

Բայց նա սոսկալի՜ յե, սոսկալի՜...

ՅԵՐԵՏԱՍԱՐԴ ՍԻՐԵԱՅԻ

Այստեղ մի՛ մնաք, արքայադուստր, խնդրում եմ ձեզ:

ՍԱԼՈՄԵ

Ամենից սարս սփելին նրա աչքերն են: Կարծես
Տիրոսյան զորգի վրա ջահերի կրակով բացված խորշեր
լինեն: Կարծես սեւ քարանձավներ են, ուր վիշապներն
են ննջում, Յեգիպտոսի սեւ քարանձավները, ուր
վիշապներն են ապաստանում: Կարծես սեւ լճեր լինեն
ցնորական լուսիններով մրրկւած: Ինչպե՞ս եր կարծում
նա նորից պիտի խոսի՞...

ՅԵՐԵՏԱՍԱՐԴ ՍԻՐԵԱՅԻ

Այստեղ մի՛ մնաք, արքայադուստր, յեւ ձեզ խնդ-
րում եմ, մի՛ մնաք այստեղ:

ՍԱԼՈՄԵ

Վորքան վտիտ ե նա: Կարծես մի նրբագին փղոս-
կըրյա պատկեր լինի: Կարծես արծաթյա մի պատկեր ե:
Յեւ հավատացած եմ, վոր նա նույնքան վողջախոն ե
վորքան յեւ լուսինը: Կարծես՝ արծաթյա մի ճառա-
գայթ ե նա: Նրա մարմինը շատ սառն ե, ինչպես
փղոսկր: Յեւ մոտիկից եմ ուզում նայել նրան:

ՅԵՐԵՏԱՍԱՐԴ ՍԻՐԵԱՅԻ

Վո՛չ, վո՛չ, արքայադուստր:

ՍԱԼՈՄԵ

Յեւ մոտիկի՛ց պիտի նայեմ նրան:

ՅԵՐԵՏԱՍԱՐԴ ՍԻՐԵԱՅԻ

Արքայադու՛ստր, արքայադու՛ստր:

ՅՈՒԲԱՆԱՆ

Ո՞վ ե այդ կինը, վոր նայում ե ինձ: Յեւ չեմ
ուզում վոր նա ինձ նայե: Ինչո՞ւ յե նայում ինձ իր
վոսկեղեն աչքերով, վոսկենեղ թերթիչների տակից:
Յեւ չգիտեմ, ո՞վ ե նա: Յեւ այդ չեմ ուզում իմանալ:
Ասացեր նրան՝ թող հեռանա: Նրա հետ չե, վոր յեւ
ուզում եմ խոսել:

ՍԱԼՈՄԵ

Յեւ Սալոմեն եմ, Հերովդիյադայի դուստրը, արքա-
յադուստրը Հրեյաստանի:

ՅՈՒԲԱՆԱՆ

Հեռացի՛ր, դուստր Բաբելոնի: Մի մոտենա Տիրոջ

ընտրյալին: Դո մայրն իր պղծության գինիյով լցրեց
յերկիրը յեւ նրա մեղքերի աղաղակն Աստուծո ական-
ջին հասավ:

ՍԱՆՈՄԵ

Նորից խոսիր, Յոբանաա՛ն, քո ձայնն արբեցնում
է ինձ:

ՅԵՐԵՄԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Արքայադուտր, արքայադուտր, արքայադուտր:

ՍԱՆՈՄԵ

Նորից խոսիր, խոսիր Նորից, Յոբանաան յեւ ասա
ի՛նչ պիտի անեմ յես:

ՅՈՔԱՆԱԱՆ

Ինձ մի՛ մերձենաք, դուտր Սողոմի, այլ սեւ թողով
ծածկեցեք ձեր յերեսը, մոխիր ցանեցեք ձեր գլխին
յեւ գնացեք անապատ Մարդո Վորդուն փորոնելու:

ՍԱՆՈՄԵ

Ո՞վ է նա՛ Մարդո Վորդին: Արդյոք նա յեւս
նույնքան զեղեցիկ է, փոքան դ՞ու, Յոբանաան:

ՅՈՔԱՆԱԱՆ

Հեռացի՛ր, հեռացի՛ր... Յես լսում եմ, ինչպես
պալատում մահվան հրեշտակի թեւերն են թափա-
հարում:

ՅԵՐԵՄԱՍԱՐԴ ՍԻՐԻՅԱՅԻ

Արքայադուտր, աղաչում եմ ձեզ, վերադարձե՛ք:

ՅՈՔԱՆԱԱՆ

Հրեշտակ Աստուծո, ի՛նչ եւ փորոնում այստեղ,

դաշույնը ձեռքիդ, ո՞ւմ ես փորոնում այս անբարիշտ
պալատում: Դեռ չի հասել այն մարդու օրը, փո-
րածաթե հագուստով պիտի մեռնի:

ՍԱՆՈՄԵ

Յոբանաա՛ն:

ՅՈՔԱՆԱԱՆ

Ո՞վ է խոսում:

ՍԱՆՈՄԵ

Յոբանաա՛ն, ես սիրահարված եմ քո մարմնի վրա:
Դո մարմինն սպիտակ է, փրպես արոտի շուշանը,
փորին հնձվորը դեռ չի դիպել: Դո մարմինն սպիտակ
է, փրպես սարերում պառկած ձյունը, փրպես ձյունը,
փոք պառկած է Հրեյաստանի սարերում յեւ դեպի
հովիտը չի իջնում: Վարդերն Արաբիայի թագուհու
այգում այնպես սպիտակ չեն, ինչպես քո մարմինը:
Վո՛չ վարդերն Արաբիայի թագուհու այգում, փո՛չ
արշալույսի բայերը, փոք դողդողում են տերեւների
վրա, փո՛չ լուսնի լանջը, յերբ նա հանգչում է ծովի
լանջին: Չկա՛ աշխարհում փոչ մի բան, փոք այնպես
սպիտակ լինի, ինչպես քո մարմինը: Թույլ տուր
դիպչեմ քո մարմնին:

ՅՈՔԱՆԱԱՆ

Հեռացի՛ր, դուտր Բաբելոնի: Կնոջ միջոցով է,
փոք չարն աշխարհ է մտել: Հետս մի՛ խոսեք: Յես
չեմ ուզում բեզ լսել: Յես փոչ փոքի չեմ լսում, բացի
Աստուծոյ:

ՍԱՆՈՄԵ

Դո մարմինը զգվելի՛ յե: Նա բորոտի մարմնի յե

Նման: Նա նման և սպիտակեցրած պատի, վորի վրա իժեր են սողում, վորի վրա կարիճներ են բուն դրել: Նա նման և սպիտակեցրած մի դագաղի, վոր զագրելի բաներով և լցված: Սարսափելի չե, սարսափելի չե քո մարմինը: Յես քո մազերի վրա եմ սիրահարված, Յոբանաան: Քո մազերը՝ նման խաղողի վողկույզներին, սեւ խաղողի վողկույզներին, վոր կախվում են յեղեմի վազերից, յեղեմականների յերկրում: Քո մազերը՝ վորպես Լիբանանու յեղեմին, վորպես Լիբանանու հսկա յեղեմին, վոր ստվեր և տախ առյուծներին յեւ ափագակներին, վորոնք ուզում են ցերեկով թագնված մնալ: Այն յերկար ու սեւ գիշերները, գիշերները, յերբ լուսինը դուրս չի գալիս, յերբ աստղերը յերկջոտ են, այդպես սեւ չեն: Լուսթյունը, վոր ննջում և անտառներում, այդպես սեւ չե: Չկա՝ աշխարհում վոչինչ, վոր այնպես սեւ լինի, ինչպես քո մազերը: Թույլ տուր դիպչեմ քո մազերին:

ՅՈՒԲԱՆԱՆ

Հեռացիր, Սողոմի դուստր: Մի դիպչիր ինձ: Չպետք և պղծել Տիրոջ տաճարը:

ՍԱՆՈՄԵ

Գարշելի յեն քո մազերը: Յեխով ու փոշով են պատած նրանք: Կարծես փշյա պսակ և, վոր դրել են քո հակտին: Կարծես սեւ ոճերի մի կծիկ և, վոր գալարվում և քո վզի շուրջը: Յես չեմ սիրում քո մազերը: Քո բերանն և, վոր սիրում եմ յես Յոբանաան: Քո բերանը նման և շիկակարմիր գոտու փղոսկրյա աշտարակի վրա: Նա նման և նոսն, վոր կիսված և փղոսկրյա դանակով: Նոսն ծաղիկները:

վոր բացվում են Տիրոսում յեւ ափելի կարմիր, բան վարդերը: Փողերի կարմիր ճիւղ, վոր թագավորների զալուստն և ավետում, վոր ահ ու սարսափ և ներշնչում թշնամիներին — այդքան կարմիր չե: Քո բերանն ավելի կարմիր և բան այն մարդկանց փոտերը, վորոնք խաղող են կոխում հնձաններում: Քո բերանն ավելի կարմիր և, բան փոտներն այն աղալնիկների, վորոնք տահարներում են ապրում յեւ վորոնց քրմնն են կերակրում: Քո բերանն ավելի կարմիր և, բան փոտներն այն մարդու, վոր անտառից և վերադառնում, ուր առյուծ և սպանել յեւ փոսկիփայլ վագրեր տեսել: Քո բերանը նման և մարջանի ճյուղի, վոր ձկնորսները գտնում են ծովի խավարում յեւ պահում են թագավորների համար: Նա նման և կարմրատեղի, վոր Մոաբիցիները գտնում են Մոաբիցի հանքերում յեւ վորը խլում են նրանցից թագավորները: Քո բերանը՝ վորպես աղեղը պարսից թագավորի, վոր կարմրատեղով և ներկված յեւ վորի ծայրերը մարջան են: Չկա աշխարհում վոչինչ, վոր այնպես կարմիր լինի ինչպես քո բերանը: Թույլ տուր համբուրեմ քո բերանը:

ՅՈՒԲԱՆԱՆ

Յերբեք, դուստր Բաբելոնի: Սողոմի դուստր՝ յերբեք:

ՍԱՆՈՄԵ

Յես կհամբուրեմ քո բերանը, Յոբանաան: Յես կհամբուրեմ քո բերանը:

ՅԵՐԵՍԱՍԱՐԴ ՍԻՐԵՅԱՅԻ

Արքայադուստր, արքայադուստր, դու, վոր նման

ես մրտի հասմիկին, դու աղավաղակների աղավաղակ,
այդ մարդուն մի՛ նայիր, մի՛ նայիր դրան: Այդպիսի
բաներ մի ասիր նրան: Յես այդ չեմ կարող տանել...
Արքայադուստր, արքայադուստր, մի՛ ասիր այդպիսի
բաներ:

ՍԱԼՈՄԵ

Յես կհամբուրեմ քո բերանը, Յորանաան:

ՅԵՐԻՏԱՍԱԿՈՒ ՍԻՐԻՅԱՅԻ

Ահ...

Սպանում ե ինքն իրան յեզ ընկնում Սալոմեյի յեզ Յորանաանի մեջտեղը

ՀԵՐՈՎԻԹԱԴԱՅԻ ՄԱՆԿԱՎԻԿԸ

Յերիտասարդ սիրիյացին ինքնասպան յեղավ: Յերի-
տասարդ հրամանատարն սպանեց իրան: Ինքն իրան
սպանեց նա, վոր իմ ընկերն եր: Յես նրան նվիրել եյի
մի տիֆիկ՝ լի անուշահոտ ջրով յեզ արծաթյա ողեր:
Յեզ ահա նա սպանված ե: Ահ, միթե նա չե՞ր գուշա-
կում, վոր դժբախտություն պիտի պատահի: Յես ինքս
գուշակեցի յեզ ահա յեկավ դժբախտությունը: Յես
լավ գիտեյի վոր լուսինը մեռել ե վորոնում, բայց
չգիտեյի վոր սրան եր վորոնում լուսնյակը: Ահ, ինչո՞ւ
յես լուսնից չթագցրի նրան: Յեթե թագցնեյի քարան-
ձավում, լուսինը նրան չեր տեսնի:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Արքայադուստր, ահա յերիտասարդ հրամանատարն
ինքն իրան սպանեց:

ՍԱԼՈՄԵ

Թույլ տուր համբուրեմ քո բերանը Յորանաան:

ՅՈՒՐԱՆԱՆ

Միթե ան չունեք դուք, դուստր Հերովիյադայի:
Միթե չասացի յես ձեզ, վոր լուսն եմ, ինչպես պալա-
տում մահվան հրեշտակն իր թեպերն ե թափահարում:
Յեզ այդ հրեշտակը՝ միթե նա չի յեկել արդեն:

ՍԱԼՈՄԵ

Թույլ տուր համբուրեմ քո բերանը:

ՅՈՒՐԱՆԱՆ

Դուստր շնության, կա միայն մի մարդ, վոր
կարող ե քեզ փրկել: Դա այն Մարդն ե, վորի մասին
ասացի քեզ: Գնացե՛ք, վորոնեցեք նրան: Այժմ նա
Դալիլիական ծովի վրա յե յեզ նավակում քարոզում ե
իր աշակերտներին: Ծունկ չոքեցեք ծովափին յեզ նրա
անունը տվեք ու խնդրեցեք: Յեզ յերբ ձեզ մոտ գա,
վորովհետեւ նա գնում ե ամենքի մոտ, ու կանչում ե,
նրա վոտներն ընկեք յեզ՝ ձեր մեղքերին թողություն
խնդրեցեք:

ՍԱԼՈՄԵ

Թույլ տուր համբուրեմ քո բերանը:

ՅՈՒՐԱՆԱՆ

Անե՛ժք քեզ, արյունախառնությունյամբ պղծված մոր
դուստր, անե՛ժք քեզ:

ՍԱԼՈՄԵ

Յես կհամբուրեմ քո բերանը, Յորանաան:

ՅՈՒՐԱՆԱՆ

Յես քեզ չեմ ուզում նայել: Յես չեմ նայի քեզ:
Դու անիծված ես, Սալոմե, դու անիծված ես:

Ինչում ե ջրհորը:

ՍԱՀՈՄԵ

Յեա կհամբուրեմ քո բերանը, Յոբանաան, յեա կհամբուրեմ քո բերանը:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Դիպակը պետք է տանել մի ուրիշ տեղ: Տևորարքը դիպակ տեսնել չի սիրում, բացի իր սպանած մարդկանց դիպակներից:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱՅԻ ՄԱՆԿԱՎԱԿԻԿ

Նա իմ յեղբայրն էր: Ավելի մտերիմ էր, քան մի յեղբայր: Յեա նրան մի փոքրիկ տուփ էլի տվել՝ անուշահոտ ջրով լի յեվ մի արծաթյա մատանի, վոր նա միշտ կրում էր մատին: Յերեկոները մենք շրջում էինք գետի ափին յեվ նշենիների տակ, ուր նա պատմում էր ինձ իր հայրենիքի մասին: Նա միշտ ցածր ձայնով էր խոսում: Նրա ձայնի հնչյունը սրնգահարի սրինգի ձայնին էր նման: Նա շատ էր սիրում գետի մեջ ինքն իրան նայել: Այդ բանի համար յեա նախատում էլի նրան:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Դուք իրավացի յեր: Դիպակը պետք է թագցնել: Պետք չէ, վոր տետրարքը տեսնի այն:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Տևորարքն այստեղ չի գա: Նա յերբեք պատշգամբ չի դալիս: Նա մարգարեից շատ է վախենում:

Մտնում են Հերովդը, Հերովդիսական յեվ ամբողջ արքունիքը:

ՀԵՐՈՎԴ

Վորտե՞ղ և Սալոմեն: Վորտե՞ղ և արքայադուստրը:

Ինչո՞ւ նա չվերադարձավ հանդիսարանը յերբ յեա հրամայեցի: Ահ, ահա նա:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Չպետք է նայել նրան: Դուք անդադար նրան եք նայում:

ՀԵՐՈՎԴ

Այս յերեկո լուսինը շատ տարօրինակ տեսք ունի: Այնպես չէ՞, շատ արտասովոր տեսք ունի լուսինը: Կարծես հիստերիկ կին է, հիստերիկ մի կին, վոր շրջում է յեվ ամեն տեղ սիրեկաններ փորոնում: Բացի այդ նա մերկ է: Բոլորովին մաքր է նա: Ամպերն ուզում են ծածկել նրան, բայց նա չի կամենում: Նա թափառում է ամպերի մեջ, փրպես հարբած մի կին: Յեա հատուտ զիտեմ, վոր նա սիրեկան է փորոնում: Այնպես չէ՞ նա թափառում է, վորպես հարբած կին: Նա հիստերիկ կնոջ է նման, այնպես չէ՞:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Վոջ: Լուսինը լուսնի է նման, յեվ ուրիշ փոչինչ: Վերադառնանք: Դուք անելիք չունեք այստեղ:

ՀԵՐՈՎԴ

Յեա կմնամ: Մանասե՛, փռեցեք այստեղ գորգերը: Վառեցե՛ք ջահերը: Բերե՛ք փղոսկրյա սեղաններն ու հասալա սեղանները: Ողբ հրաշալի յե այստեղ: Յեա նորից պիտի գինի խմեմ իմ հյուրերի հետ: Պետք է ամեն կերպ պատվել կեսարի գեսպաններին:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Նրանց պատճառով չե, վոր դուք մնում եք այստեղ:

ՀԵՐՈՎԴ

Այո՛, ողբ հրաշալի յե: Յեկ, Հերովդիսիադա, մեր հյուրերը մեզ են սպասում: Ահ, յես սայթաքեցի: Յես արյան մեջ սայթաքեցի: Սա վատ նշան է: Սա շատ վատ նշան է: Ի՞նչ արյուն է այս: Յեվ այս դիպակը: Ի՞նչ բան ունի այստեղ դիպակը: Մի՞թե դուք կարծում եք, վոր յես նման եմ յեգիպտական թագավորի՞ն, վոր վոչ մի խնճույք չի տալիս առանց հյուրերին մի դիպակ ցույց տալու: Վերջապես ո՞վ է սա: Յես չեմ ուզում նայել սրան:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Դա մեր հրամանատարն է, արքա: Դա յերիտասարդ սիրիյացին է, վորին դեռ յերեք որ սրանից առաջ դուք մեր վրա հրամանատար կարգեցիք:

ՀԵՐՈՎԴ

Յես չեմ հրամայել վոր սպանեն նրան:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Նա ինքնասպան յեղավ, Տեր:

ՀԵՐՈՎԴ

* Ինչո՞ւ: Զե՞ վոր յես նրան հրամանատար կարգեցի:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Մենք չգիտենք, Տեր: Սակայն նա ինքն սպանեց իրան:

ՀԵՐՈՎԴ

Այդ ինձ տարորինակ է թվում: Յես կարծում եյի թե միայն հոռմեյացի փիլիսոփաներն են ինքնասպա-

նություն զործում: Այնպես չե՞ Տիգեղին, Հռոմում փիլիսոփաներն իրանք իրանց սպանում են:

ՏԻԳԵԼԻՆ

Կան այդպիսիները, Տեր, վորոնք իրանց սպանում են: Այդ՝ ստոյիկյաններն են: Նրանք շատ կոպիտ մարդիկ են: Վերջապես նրանք շատ ծիծաղելի մարդիկ են: Ինձ թվում է, վոր շատ ծիծաղելի յեն նրանք:

ՀԵՐՈՎԴ

Ինձ ել այդպես է թվում: Ինքն իրան սպանելը՝ ծիծաղելի բան է:

ՏԻԳԵԼԻՆ

Հռոմում նրանց շատ են ծաղրում: Կայսրը նրանց մասին մի յերգիծական պոյեմ է գրել: Ամեն տեղ կրկնում են այն:

ՀԵՐՈՎԴ

Ահ, նա յերգիծական պոյեմ է գրել նրանց մասին: Յեսարը զարմանալի՛ յե: Նա ամեն ինչ կարող է անել: Տարորինակ է վոր ինքնասպան է յեղել յերիտասարդ սիրիյացին: Յես նրան ափսոսում եմ: Այո՛, յես շատ եմ ափսոսում: Վորովհետեւ նա գեղեցիկ եր: Նույն իսկ շատ եր գեղեցիկ: Նա շատ նվաղուն աչքեր ուներ: Յես հիշում եմ, տեսել եմ նրան այդպիսի նվաղուն աչքերով Սալոմեյին նայելիս: Ընչո՞ւ, ինձ թվաց վոր նա Սալոմեյին շատ եր նայում:

ՀԵՐՈՎԴԻՑԱԴԱ

Կան յեվ ուրիշները, վոր Սալոմեյին շատ են նայում:

ՀԵՐՈՎԴ

Նրա հայրը թագաւոր եր: Յես նրան արտաքսեցի
իր թագաւորութիւնից: Յեւ նրա մորը, վոր թագուհի
յեր, դուք ստրուկուհի դարձրիք, Հերովդիսպա: Այդ-
պիսով նա այստեղ հյուրի պես եր: Յեւ դրա համար
յես նրան հրամանատար նշանակեցի: Յես աւիստում
եմ, վոր նա մեռել ե: Սակայն ինչո՞ւ յեր դիպակն այստեղ
թողել: Պետք ե տանել այստեղից: Յես չեմ ուզում
տեսնել: Տարեր դիպակը:

Դիյակը տանում են:

Այստեղ ցուրտ ե: Այստեղ բամի յես: Այնպես չե՞մ,
այստեղ բամի յես:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Բոլորովին վոյ: Այստեղ բամի չկա:

ՀԵՐՈՎԴ

Վոյ, այստեղ բամի յես: Յեւ յես զգում եմ ողում
թեւերի թափահարումի նման մի բան: Հսկայական
թեւերի թափահարումի նման մի բան: Դուք չե՞ք լսում:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես վոչինչ չեմ լսում:

ՀԵՐՈՎԴ

Յես ել այլեւս չեմ լսում: Բայց լսում եյի: Անշուշտ,
դա բամի յեր: Անցավ: Բայց վոյ, յես նորից եմ լսում:
Դուք չե՞ք լսում: Դա ի՞նչ յեւ ի՞նչ թեւերի թափա-
հարումի յես նման:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես ձեզ ասում եմ, վոր վոչինչ չկա: Դուք հիվանդ
եք: Վերադառնա՛նք:

ՀԵՐՈՎԴ

Յես հիվանդ չեմ: Ձեր դուստրն ե հիվանդ: Նա
շատ հիվանդոտ տեսք ունի, ձեր դուստրը: Յես նրան
յերբեք չեմ տեսել այդքան գունատ:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես ձեզ ասացի, վոր նրան չնայեր:

ՀԵՐՈՎԴ

Դինի լցրեր:

Դինի յես բերում:

Սալումն, յեկե՛ք այստեղ, մի քիչ գինի խմեցեք հետս,
յես ազնիւ գինի ունեմ: Ինքը կեսարն ե ուղարկել այդ
գինին: Թրջեցեք նրանով ձեր մանրիկ կարմիր շրթունք-
ները, իսկ հետո յես կը դատարկեմ բաժակը:

ՈԱԼՈՄԵ

Յես ծարավ չեմ տեսարարը:

ՀԵՐՈՎԴ

Դուք լսում եք, ինչպե՞ս ե պատասխանում ինձ նա,
ձեր դուստրը:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես կարծում եմ վոր նա շատ իրավացի յես: Ինչո՞ւ
դուք շարունակ նրան եք նայում:

Միրզ քերեր:

ՀԵՐՈՎԴ

Միրզ ևն քերում:

Սալամն', յեկեք հետս միրզ կերեր: Յես շատ եմ սիրում տեսնել մրգի վրա քո մանրիկ ատամների հետքերը: Մի փոքրիկ կտոր կծեցեք այս պտուղից յեվ մնացյալը կուտեմ յես:

ՍԱԼԱՄԵ

Յես քաղցած չեմ, տետրարք:

ՀԵՐՈՎԴ Հերովդիսայան

Ահա թե ինչպես եք դատախարակել դուք նրան, ձեր դատերը:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Իմ դուստրն ու յես արքայական ծագում ունենք: Մինչդեռ դո՛ւ—, քո պապը ուղտարած ե յեղել: Բացի այդ նա յեվ ավազակ ե յեղել:

ՀԵՐՈՎԴ

Դու սո՛ւտ ես ասում:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Դու շատ լավ գիտես, փոր այդ ճշխարիտ ե:

ՀԵՐՈՎԴ

Սալամն', յեկ նստիր կողքիս: Յես քեզ կտամ քո մոր զանր:

ՍԱԼԱՄԵ

Յես հոգնած չեմ, տետրարք:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Դուք լա՞վ եք տեսնում թե ինչ կարծիք ունի նա ձեր մասին:

ՀԵՐՈՎԴ

Բերե՛ք... Ի՞նչ եյի ուզում յես: Չգիտեմ: Ահ մտաբերեցի:

ՅՈՒԲԱՆԱՆԻ ԶԱՅԵԸ

Հասել ե ժամանակը: Այն, ինչ յես գուշակել եյի, կատարվեց, ասում ե Աստված: Հասավ այն օրը, փոքի մասին խոսում եյի յես:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Լռեցրե՛ք դրան: Յես նրա ծայնը չեմ ուզում լսել: Այդ մարդն անդադար հայհոյանք ե թափում իմ վրա:

ՀԵՐՈՎԴ

Նա ձեր մասին փոչինչ չի ասում: Բացի դրանից, նա շատ մեծ մարգարե յե:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Մարգարեներին յես չեմ հավատում: Մի՞թե մարդ կարող ե գուշակել թե ի՞նչ պիտի պատահի: Այդ փոչ փոք չգիտե: Բացի դրանից նա միշտ վիրավորում ե ինձ: Բայց ինձ թվում ե, փոր դուք վախենում եք նրանից... Այո՛, յես լավ գիտեմ, փոր դուք նրանից վախենում եք:

ՀԵՐՈՎԴ

Յես նրանից չեմ վախենում: Յես փոչ փոքից չեմ վախենում:

ՀԵՐՈՎԴԻՅԱՊԱ

Այո՛, դուք նրանից վախենում եք: Յեթե չեք վախենում ապա ինչու նրան հրեյաներին չտվիք, չե՞ վոր նրանք վեց ամիս ե պահանջում են նրան:

ՀՐԵՅԱ

Իրոք, արքա, ավելի լավ կլինենք, յեթե մեզ տալիք նրան:

ՀԵՐՈՎԴ

Բավ ե այդ մասին: Յեա արդեն ձեզ տվել եմ իմ պատասխանը: Յեա նրան չեմ ուզում տալ: Դա մի մարդ ե, վոր տեսել ե Աստծուն:

ՀՐԵՅԱ

Այդ, այդ անկարելի չե: Յեղիյա մարգարեյից հետո վոչ վոր Աստծուն չի տեսել: Յեղիյա մարգարեն վերջինն ե յեղել վոր տեսել ե Աստծուն: Մեր ժամանակները Աստված մարդկանց չի յերեւում: Նա թագուն ե պահում իրան: Յեւ դրա համար ե, վոր յերկիրը լի յե անբախտություններով:

ՄԻ ԱՅԼ ՀՐԵՅԱ

Վերջապես հայտնի չե՛ իրոք տեսել ե Յեղիյան Աստծուն, թե վոչ: Ավելի ճիշտ՝ նա Աստծու ստվերն ե միշտ տեսել:

ՅԵՐՐՈՐԴ ՀՐԵՅԱ

Աստված իրան յերբեք չի թազցնում: Նա իրան ցույց ե տալիս միշտ յեւ ամեն բանում: Աստված նույնպես յեւ չարի մեջ ե, ինչպես բարու մեջ:

ՉՈՐՐՈՐԴ ՀՐԵՅԱ

Այդպես չպետք ե ասել: Դա շատ վտանգավոր միտք ե: Դա մի միտք ե, վոր Ազգքսանդրիական դպրոց-ներից ե յեկել, վորտեղ հուճական փրիստոփաություն են սովորեցնում: Իսկ հույները կռապաշտ են: Հույները մինչեւ իսկ թլպատված ել չեն:

ՀԵՆԳԵՐՈՐԴ ՀՐԵՅԱ

Յերբե՛ք չի կարելի իմանալ թե ինչպես ե վարվում Աստված: Խորհրդավոր են նրա ուղիները: Կարող ե պատահել, վոր այն, ինչ մենք չարիք ենք անխնամ՝ բարիք ե, իսկ այն, ինչ մենք բարիք ենք անխնամ՝ չարիք ե: Վոչինչ չի կարելի իմանալ: Հարկավոր ե լոկ հնազանդվել ամեն բանի: Աստված շատ ե զորավոր: Նա միշտ ժամանակ հարվածում ե յեւ թուլերին, յեւ ուժեղներին: Նա վոչ վորի առավելություն չի տալիս:

ԱՌԱՋԻՆ ՀՐԵՅԱ

Այդ ճիշտ ե: Սարսափելի՛ յե Աստված: Նա փշրում ե յեւ թուլերին յեւ ուժեղներին, ինչպես ցորենն են փշրում սանդի մեջ: Բայց այդ մարդը Աստծուն յերբեք չի տեսել: Յեղիյա մարգարեյից հետո վոչ վոր չի տեսել Աստծուն:

ՀԵՐՈՎԴԻՅԱՊԱ

Լեւցրե՛ք դրանց: Դրանք ինձ ձանձրացնում են:

ՀԵՐՈՎԴ

Բայց յես լսել եմ, վոր Յոքանատանն ինքն ե Յեղիյա մարգարեն:

ՀՐԵՅԱ

Այդ անկարելի յե: Յեղիյա մարգարեյից հետո
յերեքհարյուր տարուց ավել և անցել:

ՀԵՐՈՎԴ

Կան այնպիսիները, վոր ասում են թե դա Յեղիյա
մարգարեն է:

ՆԱԶՈՎՐԵՅԻ

Յես համոզված եմ, վոր դա Յեղիյա մարգարեն է:

ՀՐԵՅԱ

Վո՛չ, վո՛չ, դա Յեղիյա մարգարեն չէ:

ՅՈՒՔԱՆԱՆԻ ԶԱՅՆԸ

Հասել և որը, հասել և Տիրոջ որը յեւ յես լսում եմ
նրա քայլերը լեռների վրա, նրա՛, ով աշխարհի Փրկիչը
պիտի լինի:

ՀԵՐՈՎԴ

Դրանով ի՞նչ և ուզում ասել: Աշխարհի Փրկի՞չ:

ՏԻՔԵԼԻՆ

Դա կեսարի տիտղոսներից մեկն է:

ՀԵՐՈՎԴ

Բայց կեսարը Հրեյաստան չի գալու: Յես յերեկ
Հոռից նամակ ստացա: Ինձ բան չեյին գրել այդ
մասին: Վերջապես դուք, Տիգելին, ծմեռ Հոռմ եք
յեղել, վոչինչ չեք լսել այդ մասին:

ՏԻՔԵԼԻՆ

Ճշմարիտ վոր, արքա, յես այդ մասին բան չեմ
լսել: Յես միշտն տիտղոսն եյի բացատրում: Դա կեսարի
տիտղոսներից մեկն է:

ՀԵՐՈՎԴ

Կեսարը չի կարող գալ, նա վոտացավ ունի: Ասում
են, վոր նրա վոտները փղի վոտների նման են: Բացի
այդ կան յեւ պետական նկատումներ: Ով հեռանում է
Հոռմից՝ կորցնում է Հոռմը: Նա չի գա: Վերջապես
կեսարը տեր է: Յեթե կամենա՛ կարող և յեւ գալ:
Սակայն յես չեմ կարծում, վոր նա գա:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՅԻ

Մարգարեյի խոսքը կեսարի մասին չեր, արքա՛:

ՀԵՐՈՎԴ

Կեսարի մասին չե՞ր:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՅԻ

Վոչ, արքա:

ՀԵՐՈՎԴ

Հապա ո՞ւմ մասին եր խոսում նա:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՅԻ

Մեսսիայի՛ վորը յեկել է:

ՀՐԵՅԱ

Մեսսիյան չի յեկել:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՅԻ

Նա յեկել և յեւ տմեն տեղ հրաշքներ և գործում:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Վճճ, վճճ, հրաշքներ: Յես հրաշքների չեմ հավատում: Յես այդ շատ եմ տեսել:

Մանկավիճիկն:

Իմ հովհարը:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Այդ մարդն իսկական հրաշքներ և գործում: Այդպես, մի հարսանիքում, վոր տեղի ուներ Գալիլիայի մի փոքրիկ քաղաքում, մի բախական նշանավոր քաղաքում, նա ջուրը՝ գինի դարձրեց: Այդ պատմել են ինձ մարդիկ, վոր այնտեղ ներկա յին յեղել: Նմանապես, նա բժշկել և յերկու բորոտների վոր նստած են յեղել. Կափառնաումի դարբասի առջև, բժշկել և միայն իր ձեռքը նրանց վրա դնելով:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Վճճ, Կափառնաում նա յերկու կույր և բժշկել:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Վճճ, բորոտ են յեղել այդ յերկուսը: Բայց նա կույրեր ել և բժշկել: Նրան տեսել են մի սարի վրա հրեշտակների հետ խոսելիս:

ՍԱԴՈՒԿԵՑԻ

Հրեշտակ չկա:

ՓԱՐԻՍԵՑԻ

Հրեշտակներ կան, բայց յես չեմ հավատում, վոր այդ մարդը խոսած լինի նրանց հետ:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Անցորդների մի բազմութուն տեսել և նրան հրեշտակների հետ խոսելիս:

ՍԱԴՈՒԿԵՑԻ

Վճճ հրեշտակների:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Ինձ նեղացնում են սրանք: Սրանք հիմար են: Բոլորովին հիմար են սրանք:

Մանկավիճիկն:

Դեհ, լալ, իմ հովհարը:

Մանկավիճիկը տալիս և հովհարը:

Դուք յերազկոտ տեսք ունեք: Պետք չե՛ յերազել: Յերազողները հիվանդներ են:

Հովհարով իսկում և մանկավիճիկն:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Նմանապես Յայրոսի դստեր հրաշքը:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Այո՛, այո՛, այդ կատարեբարպես հաստատ բան ե՛: Այդ անկարելի՛ յե ժխտել:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Այս մարդիկ խենթացել են: Լուսնին շատ են նայել սրանք: Ասացիք թող լսեն:

ՀԵՐՈՎԴ

Ի՛նչ բան և այդ Յայրոսի դստեր հրաշքը:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Յայրոսի դուստրը մեռել էր յեվ նա հարություն տվեց նրան:

ՀԵՐՈՎԴ

Նա մեռելներին հարություն և տալիս:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Այո՛, արքա, նա մեռելներին հարություն և տալիս:

ՀԵՐՈՎԴ

Յեա չեմ ուզում վոր նա այդ բանն անե: Յեա այդ արգելում եմ նրան: Յեա չեմ թույլատրում մեռելներին հարություն տալու: Պետք է գտնել այդ մարդուն յեվ ասել, վոր յեա արգելում եմ մեռելներին հարություն տալը: Այժմ վորտեղ է նա, այդ մարդը:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Ամեն տեղ, արքա, բայց շատ դժվար է գտնել նրան:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Ասում են, վոր նա այժմ Սամարիյա յե:

ՀՐԵՍԱ

Ուրեմն նա մեսսիյան չե, թե վոր Սամարիյա յե: Սամարացիների մոտ չե, վոր պիտի գա մեսսիյան: Սամարացիները նզոված են: Նրանք յերբեք տահարներում զո՛ւ չեն բերում Աստծուն:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Մի բանի որ է, վոր նա հեռացել է Սամարիյայից: Կարծեմ այժմ նա Յերուսաղեմի շրջակայքում է:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ

Վո՛չ, վո՛չ, նա այնտեղ չե: Յեա Յերուսաղեմից նոր եմ յեկել: Ահա յերկու ամիս է նրա մասին բան չի լավում:

ՀԵՐՈՎԴ

Դա միջեմույն է: Այնուամենայնիվ պետք է գտնել նրան յեվ իմ կողմից ասել, վոր չեմ թույլատրում մեռելներին հարություն տալու: Զուրը գինի դարձնել, բժշկել բորոտներին, կույրերին... այդ ամենը նա կարող է անել, յեթե կամենում է: Դրանց դեմ ասելիք չունեմ: Մինչեվ իսկ ինձ թվում է, վոր բորոտներին բժշկելը բարի գործ է: Բայց յեա չեմ թույլատրում մեռելներին հարություն տալու: Սարսափելի կլիներ յեթե մեռելները հարություն առնեյին:

ՅՈՒԲԱՆԱՆԻ ԶԱՅՆԸ

Ահ, պագշոտ, պոռնիկ կին: Ահ, Բաբելոնի դուստր՝ վոսկի աչքերով յեվ վոսկեներկ թերթիչներով: Լսի՛ր, թե ի՞նչ է ասում Աստված. — արձակեցե՛ք նրա վրա մարդկային բազմությունը, թող ժողովուրդը բարեր առնե յեվ բարկոծե նրան:

ՀԵՐՈՎԴԻՑԱԴԱ

Լռեցրե՛ք դրան:

ՅՈՒԲԱՆԱՆԻ ԶԱՅՆԸ

Վոր զորապետները նրան պատառ պատառ անեն իրենց սրերով, վոր ջախջախեն իրենց փահաններով:

ՀԵՐՈՎԴԻՑԱԴԱ

Այդ լրբություն է:

ՅՈՒՐԱՆԱԶ

Այդպէս պիտի ջնջեմ յես անորինութիւնը յերկրի վրա, վորպեսզի բոլոր կանայք սովորեն չնետելիլ դրա գարշ գործերին

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Դուք լսում եք: Նա իմ դեմ ե խոսում: Յեւ զուք թույլ եք տալիս, վոր վիրավորեն ձեր կնոջը:

ՀԵՐՈՎԴ

Բայց նա ձեր անունը չտվեց:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Դա ի՞նչ նշանակութիւն ունի: Դուք լավ գիտեք, վոր նա ի՞նչ ե ուզում վիրավորել: Յեւ յես ձեր ամուսինն եմ, այնպէս չե՞:

ՀԵՐՈՎԴ

Այո՛, սիրելի յեւ պատժարժան Հերովդիյադա, դուք իմ ամուսինն եք, իսկ առաջ իմ յեղբոր ամուսինն եք յեղել:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Այն դուք եյիք, վոր խլեցիք ինձ նրա գրկից:

ՀԵՐՈՎԴ

Իրավ վոր, յես ավելի ուժեղ եյի, քան նա... Բայց չխոսենք այդ մասին: Յես դրա մասին չեմ ուզում խոսել: Դրա պատճառով եր, վոր մարգարեն ասաց այս սարսափելի խոսքերը: Դրա պատճառով գուցե դժբախտութիւն պատահի: Չխոսենք դրա մասին: Ազնիվ Հերովդիյադա, մենք մոռանում ենք մեր հյու-

րերին: Ինձ համար զինի լցրու, սիրելիս: Գինի լցրեք արծաթյա մեծ գավաթներն ու ապակյա մեծ գավաթները: Յես կեսարի կենացն եմ ուզում խմել: Այստեղ հռոմայեցիներ կան, պետք ե խմել կեսարի կենացը:

ԱՄԵՆՔԻՆ՝ ՄԻՅԱՍԻՆ

Կեսար, կեսար:

ՀԵՐՈՎԴ

Միթե դուք չեք նկատում՝ վորքան գունատ ե ձեր դուստրը:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Չեզ ի՞նչ՝ գունատ ե նա թե վոչ:

ՀԵՐՈՎԴ

Յես յերբեք նրան այդքան գունատ չեմ տեսել:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Չպետք ե նայել նրան:

ՅՈՒՐԱՆԱՆԻ ԶԱՅՆԸ

Այն որն արեգակը սեւ կլինի, վորպէս ստեղծի վերարկու յեւ լուսինը կլինի կարմիր, վորպէս արշու. յեւ յերկնքի աստղերը գետին կթափվեն, վորպէս թզենու կանաչ պտուղներն են թափվում թզենուց. յեւ յերկրային թագավորները կսոսկան:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Ահ, ահ, յես շատ կուզելի տեսնել այն որը, յերբ, ինչպէս դա յե ասում՝ լուսինը կդառնա կարմիր,

վորպես արյուն յիմ յերբ աստղերը գետին կթափվեն
թգենու կանաչ պտուղների նման: Հարբած մարդու
նման և խոսում այդ մարգարեն: Ինձ համար անտա-
նելի յե նրա ծայնի հնչյունը: Յես ատում եմ նրա
ծայնը: Հրամայեցե՛ք, վոր լոն:

ՀԵՐՈՎԴ

Վո՛ր: Յես չեմ հասկանում ինչ և ասում նա, բայց
կարող եմ մարգարեություն լինել:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես մարգարեությունների չեմ հավատում: Նա
գինովցած մարդու նման և խոսում:

ՀԵՐՈՎԴ

Դուցես նա Աստծո գինիյով և գինովցել:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Դա՛ ի՞նչ գինի յե՛ Աստծո գինին: Վորպիսի՞ խաղո-
ղից ե: Վո՞ր հնձանում կարելի յե զտնել այդ գինին:

ՀԵՐՈՎԴ վոր չի դադարում Սալոմ յին նայելուց՝

Տիգելին, կեսաբը հետո չխոսե՞ց, յերբ դու վերջին
անգամ Հոռոմ ելիր:

ՏԻԳԵԼԻՆ

Ինչի՞ մասին:

ՀԵՐՈՎԴ

Ինչի մասի՞ն: Ահ, յես ձեզնից բա՛ն հարցրի, այնպես
չե՞: Մոռացա թե ինչ եյի ուզում իմանալ ձեզնից:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Դուք դարձյալ իմ դատերն եք նայում: Նրան
չպետք և նայել: Յես ձեզ արդեն ասել եմ այդ:

ՀԵՐՈՎԴ

Դուք դրանից բացի ուրիշ բան չեք ասում:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես այդ կրկնում եմ:

ՀԵՐՈՎԴ

Իսկ տաճարի վերականգնումը, վորի մասին այնքա՛ն
խոսել ե: Արդյոք մտադի՞ր են մի բան անելու: Ասում
են, որ սրբարանի վարագույրն անհայտացել և,
այնպես չե՞:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Դու ինքդ յես վերցրել այն: Դու անիմաստ բաներ
ես ասում: Յես չեմ ուզում այստեղ մնալ: Վերա-
դառնա՛նք:

ՀԵՐՈՎԴ

Սալոմն, պարեցեք ինձ համար:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես չեմ ուզում, վոր նա պարի:

ՍԱԼՈՄԵ

Յես պարել չեմ ուզում, տետրա՛րք:

ՀԵՐՈՎԴ

Սալոմն, դո՛ւստր Հերովդիսադայի, պարեցե՛ք ինձ
համար:

ՀԵՐՈՎԴԻՑԱԴԱ

Հանգիստ թողեր նրան:

ՀԵՐՈՎԴ

Յես ձեզ հրամայում եմ, վոր պարիք, Սալոմն:

ՍԱԼՈՄԵ

Յես չեմ պարի, տետրարք:

ՀԵՐՈՎԴԻՑԱԴԱ ծիծաղելով

Տեսնո՞ւմ եք ինչպես հնազանդ ե նա:

ՀԵՐՈՎԴ

Ինձ ի՞նչ կպարի նա, թե վոչ: Ինձ համար միշտ նույն է: Յես յերջանիկ եմ այս յերեկո: Յես յերբեք այսպես յերջանիկ չեմ յեղել:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Մռայլ տեսք ունի նա, տետրարքը: Նա մռայլ տեսք ունի, այնպես չե՞:

ՅԵՐԿԻՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Նա մռայլ տեսք ունի:

ՀԵՐՈՎԴ

Յեվ ինչո՞ւ պիտի յերջանիկ չլինեմ: Կեսարը, վոր աշխարհի տերն է, վոր ամեն ինչի տերն է՝ սիրում ե ինձ: Յեվ ահա նա ինձ թանկագին ընծաներ ե ուղարկել: Նա խոստացել ե Հռոմ կանչել Կապադոկիացի թագավորին, վոր իմ թշնամին ե: Հռոմում

դուցե նրան խաչեն: Ինչ վոր ուզենա կարող ե անել նա, կեսարը: Նա տեր ե: Ուրեմն տեսնում եք, վոր յես ունեմ իրավունք յերջանիկ լինելու: Չկա աշխարհում վոչինչ, վոր կարողանար իմ ուրախությունը խանգարել:

ՅՈՒՔԱՆԱՄՆԻ ԶԱՅՆԸ

Նա բազմած պիտի լինի իր զահին: Ծիրանի յեվ քոսորակ պիտի լինի նրա հոգին: Յեվ նրա ձեռքին մի վոսկի անոթ, լի իր հայհոյություններով: Յեվ Տիրոջ հրեշտակը պիտի հարվածի նրան: Վորդերի կերակուր պիտի լինի նա:

ՀԵՐՈՎԴԻՑԱԴԱ

Հա՞նում եք ինչ ե ասում նա ձեր մասին: Ասում ե, վոր դուք վորդերի կերակուր պիտի լինեք:

ՀԵՐՈՎԴ

Նա իմ մասին չի խոսում: Նա իմ դեմ յերբեք չի խոսում: Նա խոսում ե Կապադոկիացի թագավորի մասին: Կապադոկիացի թագաւորի, վոր իմ թշնամին ե: Այդ նա՛ յե, վոր վորդերի կերակուր պիտի դառնա: Իմ մասին չե այդ: Նա, այդ մարգարեն, իմ դեմ վոչինչ չի ասում, բացի նրանից, վոր յես անարդար վարվեցի կնության առնելով իմ յեղբոր կնոջը: Դուցե յեվ իրավացի յե նա՛ չե՞ վոր դուք անպատու եք:

ՀԵՐՈՎԴԻՑԱԴԱ

Յե՞ս եմ անպատու, յե՞ս: Յեվ այդ ասողը դո՛ւք եք, դո՛ւք, վոր շարունակ իմ դստերն եք նայում, դուք,

վոր ուզում եք նրան պարել տալ ձեր հաճույքի համար:
Ծիծաղելի յնն ձեր խոսքերը: Յես զավակ ունեցել եմ:
Դուք եք, վոր յերբեք զավակ չեք ունեցել, նույն իսկ
ձեր հարճերից վորեւի մեկից: Այդ դո՛ւք եք անպտուղ,
վո՛չ թե յես:

ՀԵՐՈՎԴ

Լուսեցե՛ք: Յես ձեզ ասում եմ, վոր դուք անպտուղ եք:
Դուք ինձ մի զավակ չտվիք յեւ մարգարեն ասում եւ,
վոր մեր ամուսնությունը ճշմարիտ ամուսնություն չե:
Նա ասում եւ, վոր դա ազգապիղծ ամուսնություն եւ,
մի ամուսնություն, վոր դժբախտություն պիտի բերի:
Վախենամ թե նա իրավացի չե: Յես հավատացած եմ,
վոր նա իրավացի չե: Սակայն այժմ այդ բաների վրա
խոսելու ժամանակը չե: Եւ յժմ յ'ա ուզում եմ յերջանիկ
լինել: Յեւ վ իրոք յես յերջանիկ եմ: Յես շատ եմ
յերջանիկ: Վոչ մի բան պակաս չե:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես շատ գո՞հ եմ, վոր դուք այս յերեկո այդպես
լավ եք տրամադրված: Դա արտասովոր բան եւ: Բայց
ուշ եւ արդեն: Վերադառնանք: Մի մոռանաք, վոր
արեւը ծագելուն պես մենք բոլորս վորսի պիտի
գնանք: Կեսարի դեսպաններին ամեն կերպ պիտք եւ
պատվել, այնպես չե:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ

Վորբան մոռնլ տեսք ունի նա, տեսրարբբ:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ

Այո՛, նա մոռնլ տեսք ունի:

ՀԵՐՈՎԴ

Սալոմե՛, Սալոմե՛, պարեցե՛ք ինձ համար: Աղաչում
եմ, վոր պարեք ինձ համար: Տխուր եմ յես այս յերեկո:
Այո՛, յես շատ եմ տխուր այս յերեկո: Յերբ յես
այստեղ յեկա, արշան մեջ տայթաքեցի՝ դա վատ նշան եւ,
յեւ յես լսեցի, յես հավատացած եմ, վոր լսեցի ողում
ինչ վոր թեւիւրի թափահարում, ինչ վոր հսկայական
թեւիւրի թափահարում: Չգիտեմ այդ ի՞նչ եւ նշանա-
կում: Յես տխուր եմ այս յերեկո: Ուրեմն, պարեցե՛ք
ինձ համար, Սալոմե՛, աղաչում եմ ձեզ: Յեթե դուք
ինձ համար պարե՛ք, կարող եք պահանջել ինձնից ինչ
յեւ կամենաք յեւ յես կտամ ձեզ: Այո, պարեցե՛ք ինձ
համար, Սալոմե՛, յեւ յես կտամ ձեզ ինչ յեւ պահանջեք,
թեկուզ իմ թագաւորության կեսը:

ՍԱԼՈՄԵ ՎԵ ԵԼՆԵԼՎ՝

Դուք կտաք ինձ ամենը, տեսրա՛րբ, ինչ եւ վոր
պահանջե՞մ:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Մի՛ պարեք, դուատր իմ:

ՀԵՐՈՎԴ

Ամեն ինչ, թեկուզ այդ իմ թագաւորության կեսը:
Լինի:

ՍԱԼՈՄԵ

Դուք յերդվում եք, տեսրա՛րբ:

ՀԵՐՈՎԴ

Յես յերդվում եմ, Սալոմե՛:

ՀԵՐՈՎԴԻՅԱՆ

Դուստր իմ, մի պարեք:

ՍԱԼՈՄԵ

Ինչո՞վ եք յերգվում դուք, տետրա՛րք:

ՀԵՐՈՎԴ

Իմ կյանքով, իմ թագով, իմ աստվածներով: Ինչ ել
վոր կամենաք դուք՝ յես կուսամ ձեզ, յեթե պարեք ինձ
համար, թեկուզ իմ թագա լորության կեսը պահանջեք:
Ո՛հ, Սալոմե՛, Սալոմե՛, պարեցե՛ք ինձ համար:

ՍԱԼՈՄԵ

Դուք յերգվեցիք, տետրա՛րք:

ՀԵՐՈՎԴ

Յես յերգվեցի, Սալոմե՛:

ՍԱԼՈՄԵ

Ինչ ել վոր պահանջեմ ձեզնից, թեկուզ ձեր թագա-
վորության կե՞սը լինի դա:

ՀԵՐՈՎԴԻՅԱՆ

Ի՛նչ պարեք, դուստր իմ:

ՀԵՐՈՎԴ

Անգամ յեթե իմ թագավորության կեսը լինի դա:
Դու չքնաղագեզ թագուհի կլինես, Սալոմե, յեթե
կամենաս պահանջել իմ թագավորության կեսը: Նա
շատ չքնաղ թագուհի կլինի, այնպես չե՞: Ահ, ցուրտ ե

այստեղ: Այստեղ մի ցուրտ քամի յե փչում յեվ յես
լսում եմ... Ինչո՞ւ յեմ լսում այդ թեմերի թափահա-
րումը: Ո՛հ, կարելի յե կարծել թե դա՛ մի թռչուն,
մի ահագին սեվ թռչուն ե, վոր պալատում ե պատշ-
գամբի վրա: Բայց ինչո՞ւ չեմ կարողանում տեսնել
նրան: Յեվ տարափելի յե նրա թեմերի թափահա-
րումը: Սարսափելի յե նրա թեմերի թափահարումից
առաջացած քամին: Դա ցուրտ քամի յե: Բայց վոչ,
բոլորովին ցուրտ չե: Ընդհակառակը սաստիկ տաք ե:
Յես խեղդվում եմ: Ջուր լցրեք իմ ձեռներին: Ջուրն
տվե՛ք ուտեմ: Բացե՛ք վերարկույիս կոճակները: Վո՛չ:
Թողե՛ք այդ: Այդ իմ պսակն ե, վոր ցավ ե պատճա-
ռում ինձ: Իմ վարդյա պսակը: Կարծես կրակից են այդ
ծաղիկները: Նրանք այրեցին իմ ճակատը: Նա պոկում ե
գլխից ու սեղանի վրա յե գցում իր պսակը: Ահ, վերջապես յես
շնչում եմ: Վորքան կարմիր են այս թերթերը: Կարծես
արյան բծեր են սիւռոցի վրա: Այդ վոչինչ: Ձի կարելի
վորելվե նշան վորոնեկ ամեն մի տեսածդ բանում:
Այդպիսով անհնար ե դառնում կյանքը: Ավելի լավ ե
ասել, վոր արյան բծերը նույնքան գեղեցիկ են, վորքան
յեվ վարդի թերթերը: Ավելի լավ՝ կլինեք այդպես
ատել: Սակայն չխոսենք այդ մասին: Այժմ յես յեր-
ջանիկ եմ: Յես շատ եմ յերջանիկ: Յեվ ունեմ իրավունք
յերջանիկ լինելու, այնպես չե՞: Ձեր դուստրը կպարե
ինձ համար: Դուք պիտի պարեք ինձ համար այնպես
չե՞, Սալոմե՛: Դուք խոստացաք պարել ինձ համար:

ՀԵՐՈՎԴԻՅԱՆ

Յես չեմ ուզում, վոր նա պարի:

ՍԱԼՈՄԵ

Յես կպարեմ ձեզ համար, տետրա՛րք:

ՀԵՐՈՎԴ

Լսո՞ւմ եք, ինչ ե խոսում ձեր դուստրը: Նա կպարի ինձ համար: Լավ ե այդ Սալոմե, վոր պարելու յեք դուք ինձ համար: Յեվ յերբ կվերջանա ձեր պարը, մի՛ մոռանաք պահանջելու ինձնից ինչ վոր կամենաք, թեկուզ դա իմ թագավորության կեսը լինի: Յես յերդվել եմ, այնպես չե՞:

ՍԱԼՈՄԵ

Դուք յերդվել եք, տետրա՛րը:

ՀԵՐՈՎԴ

Յեվ յես յերբեք չեմ դրժի իմ խոսքը: Յես նրանցից չեմ, վորոնք իրենց խոսքը դրժում են: Յեվ ստել չգիտեմ: Յես իմ խոսքի գերին եմ յեվ իմ խոսքը թագավորի խոսք ե: Կապադոկիայի թագավորը միշտ ստում ե, բայց չե՞ վոր նա իսկական թագավոր ել չե: Նա յերկ-չոտի մեկն ե: Բացի այդ, նա ինձ փող ե պարտ յեվ չի ուզում տալ: Նա մինչեվ իսկ վերավորանք ե հասցրել իմ դեսպաններին: Նա շատ վիրավորական բաներ ե ասել: Սակայն, յերբ Հոռոմ գնա, կեսարը նրան պիտի խաչ հանե: Յես հավատացած եմ, վոր կեսարը նրան կխաչե: Իսկ յեթե փոչ, միյեմլույն ե, նա վորդերի կերակուր պիտի լինի, պիտի մեռնի: Այդպես գուշակեց մարգարեն: Դեհ, Սալոմե, ինչի՞ յեք սպասում:

ՍԱԼՈՄԵ

Սպասում եմ, վոր ստրկուհիներն ինձ համար անուշահոտ ոճեկիքներ յեվ յոթը ծածկույթ բերեն ու հանեն իմ տանդալները:

Ստրկուհիները բերում են անուշահոտ ոճեկիքներ, յոթը ծածկույթ յեվ հանում են Սալոմեյի ասնդակները:

ՀԵՐՈՎԴ

Ահ, դուք մերկ վտոններով պիտի պարեք: Այդ լավ ե, շատ լավ ե այդ: Ձեր փոքրիկ վտոնները նման կլինեն սպիտակ աղափլյակների: Նրանք նման են մանրիկ, սպիտակ ծաղիկների, վոր պարում են ծառի վրա... Ահ, փոչ: Նա արյան մեջ պիտի պարե: Գետնի վրա արյուն ե: Յես չեմ ուզում, վոր նա արյան մեջ պարե: Դա շատ վատ նշան կլինի:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Ձեզ ի՞նչ թե նա արյան մեջ կպարե: Չե՞ վոր դուք գնում եյիք արյան միջով, դուք...

ՀԵՐՈՎԴ

Ինձ ի՞նչ: Ահ, նայեցեք լուսնին: Նա կարմիր դարձավ: Նա դարձավ կարմիր, վորպես արյուն: Այդ լավ գուշակեց մարգարեն: Նա գուշակեց, վոր լուսինը կդառնա կարմիր, վորպես արյուն: Այդպես ասաց նա, այնպես չե՞: Դուք բռնորդ այդ լսեցիք: Լուսինը դարձավ կարմիր, վորպես արյուն: Դուք այդ չե՞ք տեսնում:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Յես այդ լավ եմ տեսնում: Յեվ աստղերը թափվում են, վորպես թզենու կանաչ պտուղներ, այնպես չե՞: Յեվ արեվը դառնում ե լուսնի, վորպես ստեփ վերարկու յեվ յերկրի թագավորները սոսկում են: Ահա այդ գուցե յեվ յերեվում ե: Գոնե մի անգամ իր կյանքի ընթացքում, մարգարեն իրավացի դուրս եկավ — յերկրի թագավորները սոսկում են: Սակայն վերադառնա՛նք: Դուք տկար եք: Հոռոմում կկարծեն թե դուք խելագարվել եք: Վերադառնա՛նք, ասում եմ ձեզ:

ՅՈՒՐԱՆԱԿԻ ՁԱՅՆԸ

Ո՞վ է նա, վոր գալիս է Յեղովից, վոր գալիս է Բոսորայից իր ծիրանի հագուստով, վորը շողշողում է իր հագուստի գեղեցկությամբ յիս վորը քայլում է ամենակարող գործությամբ: Ինչո՞ւ նրա հագուստը բոսորաներկ է:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Վերադառնա՛նք: Այդ մարդու ծայնը զայրույթով և լցնում իմ սիրտը: Յես չեմ ուզում, վոր իմ դուստրը պարի, քանի վոր այդ մարդն աղաղակում է այնտեղ: Յես չեմ ուզում, վոր իմ դուստրը պարի, քանի վոր դուք այդպե՛ս եք նայում նրան: Վերջապես յես չեմ ուզում, վոր նա պարի:

ՀԵՐՈՎԴ

Վեր մի՛ յե՛նի, իմ կին, իմ թագուհի, անողուտ է այդ: Մինչեւ վոր նա չպարի՝ յես չեմ վերադառնա: Պարեցե՛ք, Սալոմե, պարեցե՛ք ինձ համար:

ՀԵՐԻՎԴԻՅԱԴԱ

Մի՛ պարեր, դուստր իմ:

ՍԱԼՈՄԵ

Յես պատրաստ եմ, տնտրա՛րք:

Սալոմեն պարում է յոմը ծածկույթի պարը:

ՀԵՐՈՎԴ

Ահ, սքանչելի՛ յե, սքանչելի՛ յե, այդ: Տեսնո՞ւմ եք, նա պարեց ինձ համար, ձեր՝ դուստրը: Մոտեցե՛ք, Սալոմե, մոտեցե՛ք, վորպեսզի յես կարողանամ վար-

ծառել ձեզ: Ահ, պարահիներին յես լալ եմ վարձա-
տրում: Յես քեզ լավ պիտի վարձատրեմ: Ինչ ել վոր
կամենա՞ս պիտի տամ քեզ: Ասա՛, ի՞նչ ես ուզում,
Սալոմե՛:

ՍԱԼՈՄԵ ծռնել չորեքով՝

Յես ուզում եմ, վոր այժմ իսկ բերեն ինձ համար,
արծաթյա ափսեյի վրա...

ՀԵՐՈՎԴ ծիծաղելով՝

Արծաթյա ափսեյի վրա... Այո՛, իհարկե արծաթյա
ափսեյի վրա... Վորքան նազելի՛ յե սա, նայեցեք,
այնպես չե՛: Ի՞նչ եք ուզում, վոր բերեն ձեզ համար
արծաթյա ափսեյի վրա, իմ սիրելի, իմ գեղանի Սալոմե,
դուք վոր Հրեյաստանի կույսերի մեջ ամենից չքնա-
ղագեղն եք: Ի՞նչ եք ուզում, վոր բերեն ձեզ համար
արծաթյա ափսեյի վրա: Ասացեք ինձ: Ինչ ել վոր լինի
պիտի տամ ձեզ: Իմ գանձերը ձե՛զ են պատկանում:
Ուրեմն ի՞նչն է այդ, Սալոմե:

ՍԱԼՈՄԵ վեր կենալով՝

Յոբանասանի գլուխը:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Ահ, այդ լավ ասացիք, դուստր իմ:

ՀԵՐՈՎԴ

Վո՛չ, վո՛չ:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Այդ լավ է ասված, դուստր իմ:

ՀԵՐՈՎԴ

Վո՛չ, վո՛չ, Սալոմե՛, դուք այդ չեք պահանջում

ինծնից: Ձեր մօրը մի՛ լսեք: Նա միշտ վատ խորհուրդներ և տալիս ձեզ: Նրան չպետք է լսել:

ՍԱԼՈՄԵ

Յեա իմ մօրը չեմ լսում: Դա իմ սեփական հաճույքի համար է, փոր պահանջում եմ յես Յոքանաանի գլուխը արծաթյա ափսեյի վրա դրած: Դուք յերդվել եք, Հերովդ: Մի՛ մոռնար, փոր դուք յերդվել եք:

ՀԵՐՈՎԴ

Յեա գիտեմ այդ: Յեա յերդվեցի իմ աստվածներով: Յեա այդ լավ գիտեմ: Սակայն աղաչում եմ ձեզ, Սալոմե՛, մի այլ բան պահանջեցեք ինծնից: Պահանջեցեք իմ թագավորութեան կեսը յեւ յես կտամ ձեզ: Բայց մի պահանջեք այն, ինչ պահանջեցիք դուք:

ՍԱԼՈՄԵ

Յեա ձեզնից Յոքանաանի գլուխն եմ պահանջում:

ՀԵՐՈՎԴ

Վո՛չ, փո՛չ, յես չեմ ուզում:

ՍԱԼՈՄԵ

Դուք յերդվել եք, Հերովդ:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Այո՛, դուք յերդվել եք: Բոլորը լսեցին ձեզ: Դուք յերդվեցիք բոլորի առաջ:

ՀԵՐՈՎԴ

Դուք լռեցե՛ք, յես ձեզ հետ չեմ խոսում:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Իմ դուստրն իրավացի յե, յերբ այդ մարդու գլուխն և պահանջում: Այդ մարդը լուտանք և՛ թափում իմ վրա: Նա հրեշավոր բաներ և ասում իմ մասին: Յերևվում է, փոր իմ դուստրը սիրում է իր մօրը: Մի՛ զիջեք դուստր իմ: Նա յերդվել է, յերդվել է նա:

ՀԵՐՈՎԴ

Լռեցե՛ք, հետո մի՛ խոսեք: Սալոմե՛, խոհեմ պետք է լինել, այնպես չե՛: Այնպես չե՛, պետք է լինել խոհեմ: Յեա ձեր վերաբերմամբ յերբեք խիստ չեմ յեղել: Յեա ձեզ միշտ սիրել եմ: Դուցե յեւ չափից դուրս եմ սիրել ձեզ: Ուրեմն այդ մի պահանջեք: Սարսափելի յե, զարհուրելի յե ինծնից այդ պահանջել... Յեւ իրոք յես չեմ հավատում, փոր դուք լուրջ եք պահանջում այդ: Դիտաւոված մարդու մի գլուխ — միթե այլանդակ բան չե՞ դա: Աղջիկն այդպիսի բանի չպիտի նայե: Յեւ ի՞նչ հաճույք պիտի ստանար դրանից: Վո՛չ, փո՛չ, դուք այդ չեք ուզում: Մի ակնթարթ լսեցեք ինձ: Յեա մի զմրուխտ ունեմ — մի մեծ ու կոթ զմրուխտ, փորն ինձ կեսարի սիրելին է ուղարկել: Յեթե դուք նայեք այդ զմրուխտին — կտեսնեք այն, ինչ կատարվում է անսահման տարածութեան վրա: Ինքը կեսարը յերբ ցերկ է գնում հետը մի այդպիսի զմրուխտ է վերցնում: Բայց իմն ափելի մեծ է: Աշխարհիս ամենախոշոր զմրուխտն է դա: Դուք այդ եք ուզում, այնպես չե՛: Պահանջեցեք յեւ յես կտամ ձեզ այն:

ՍԱԼՈՄԵ

Յեա Յոքանաանի գլուխն եմ պահանջում:

ՀԵՐՈՎԴ

Դուք ինձ չեք խում, դուք չեք խում ինձ: Թույլ տվեք խոսեմ, Սալոմե:

ՍԱԼՈՄԵ

Յոբանաանի գլուխը:

ՀԵՐՈՎԴ

Վո՛չ, դուք այդ չեք ուզում: Դուք այդ լոկ ինձ տանջելու համար եք ասում: Լոկ այն պատճառով, փոր մի ամբողջ յերեկո ձե՛զ եյի նայում յես: Այո՛, այդպես է: Յես ամբողջ յերեկոն ձեզ եյի նայում: Ձեր գեղեցկությունը շփոթեցրեց ինձ: Ձեր գեղեցկությունը սարսափելի կերպով շփոթեցրեց ինձ յեվ յես չափից դուրս շատ նայեցի ձեզ: Բայց յես այլեվս այդպես չեմ անի: Չպետք է նայել վո՛չ առարկաներին, վո՛չ մարդկանց: Միայն հայելիներին պետք է նայել: Վորովհետեւ հայելիները լոկ դիմակներ են ցույց տալիս մեզ: Ո՛հ, ո՛հ, զինի՛, յես ծարավ եմ: Սալոմե՛, Սալոմե՛, բարեկամ լինենք: Վերջապես տեսե՛ք... Ի՞նչ եյի ուզում ասել յես: Այն ի՞նչ եր: Ա՛հ, մտաբերեցի: Սալոմե՛, մոտ յեկեք: Վախենամ ինձ չսեք: Սալոմե՛, դուք գիտեք իմ սպիտակ սիրամարգներին, իմ սիրտն սպիտակ սիրամարգներին, փոր զբոսում են այգում մրտենիների յեվ նոճիների միջեվ: Նրանց կոուցները փոսկեզոծ են յեվ այն հատիկները, փոր նրանք են կտցահարում — նույնպես փոսկեզոծ են: Յեվ այդ սիրամարգների փտաները ներկված են, ծիրանագույն: Յերբ նրանք կանչում են՝ անձրեվ ե գալիս, իսկ յերբ սկսում են պարել իրենց սիրամարգի պարը՝ յերկնքում Լուսնյակն ե յերեվում: Նրանք գույգ-գույգ են ման

գալիս նոճիների ու սեվ մրտենիների միջեվ յեվ նրանցից ամեն մեկին խնամում ե մի առանձին ստրուկ: Յերբեմն նրանք թռչում են ծառերի մեջ, յերբեմն հանգստանում մարգագետնի վրա յեվ լճակի շուրջը: Աշխարհում յերեսին դրանցից սքանչելի թռչուն չկա... Աշխարհում չկա փոչ մի թագավոր, փոր այդպիսի սքանչելի թռչուններ ունենա: Յես հավատացած եմ, փոր կեսարն անգամ չունի այդպիսի զմայելի թռչուններ: Յեվ յես կտամ ձեզ հիսուն սիրամարգ: Նրանք ամենուրեք կուղեկցեն ձեզ յեվ նրանց միջեվ դուք մի ահագին, սպիտակ ամպով շրջապատված լուսնյակի նման կլինեք: Յես ձեզ կտամ բոլորը: Միայն հարյուր հատ ունեմ յես յեվ աշխարհում չկա լոչ մի թագավոր, փորն իմ սիրամարգների նման սիրամարգ ունենա, բայց յես ձեզ կնվիրեմ բոլորը: Միայն թե պետք ե ազատեք ինձ իմ խոստումից յեվ չպահանջեք այն, ինչ պահանջեցիք:

Նա դատարկում ե զինու բաժակը:

ՍԱԼՈՄԵ

Տվե՛ք ինձ Յոբանաանի գլուխը:

ՀԵՐՈՎԴԻՅԱՆ

Այդ լավ ե ասված, դուստր իմ: Դուք ծիծաղելի չեք ձեր սիրամարգներով:

ՀԵՐՈՎԴ

Լռեցե՛ք: Դուք շարունակ աղաղակում եք: Դուք աղաղակում եք, փորպիս արյունարբու մի գազան: Չպետք է այդպես աղաղակել: Ձեր ձայնը գրգռում ե

ինձ: Լուսնե՛ք, ասում եմ ձեզ: Սալոմե՛, մոտձեցեք թե
ինչ եք անում: Գուցե Աստծուց ե ուղարկված այդ
մարդը: Յես հավատացած եմ, վոր նա Աստծուց ե
ուղարկված: Նա սուրբ մարդ ե: Աստծո աջն ե ղիպել
նրան: Այդ խոսքերն Աստված ե ղրել նրա բերանը:
Պալատում, ինչպես յեւ անապատում Աստված միշտ
նրա հետ ե: Համենայն դեպս, դա հնարավոր ե: Վոչ
վոր չգիտն, բայց գուցե Աստված նրա կողմն ե յեւ
նրա հետ: Յեւ յեթե նա մեռնի, գուցե դժբախտու-
թյուն պատահի: Վերջապես նա ասաց, վոր այն որը
յերբ նա մեռնի, մեկին դժբախտություն պիտի
պատահի: Այդ միջայն ինձ կարող ե պատահել: Հիշո՞ւմ
եք, յերբ յես այստեղ յեկա՝ սայթաքեցի արշան մեջ:
Բացի դրանից յես լսեցի թեւիկի թափահարում:
Դրանք շատ վատ նշաններ են: Ուրիշ նշաններ ել
կային: Յես հավատացած եմ, վոր կային յեւ այլ
նշաններ, թեյեւ յես չնկատեցի նրանց: Ուրեմն,
Սալոմե՛, չե՞ վոր դուք չեք կամենում, վոր ինձ դժբախ-
տություն պատահի: Դուք այդ չեք կամենում: Վեր-
ջապես լսեցե՛ք ինձ:

ՍԱԼՈՄԵ

Տվե՛ք ինձ Յորանաանի գլուխը:

ՀԵՐՈՎԴ

Տեսնո՞ւմ եք, դուք ինձ չեք լսում: Բայց հանգիստ
յեղեք: Յես բոլորովին հանգիստ եմ: Յես շատ հանգիստ
եմ: Լսեցե՛ք, յես թագուն պահած զարդեր ունեմ,
վոր ձեր մայրն իսկ չի տեսել, բոլորովին արտասովոր
զարդարանքներ: Յես ունեմ մարգարտյա մի մանյակ,
վոր չորս շարք մարգարտից ե հյուսված: Կարծես

լուսնյակներ լինեն արծաթյա ճառագայթների վրա
շարված: Կարծես փոսկեղեն մի ցանցով բռնված հիսուն
լուսնյակ լինի: Մի թագունի կրել ե այդ իր փղոսկրյա
լանջին: Դու յեւ թագունու նման գեղանի կլինես, յեթե
կրես այն: Յես ունեմ յերկու անասակ մեղեսիկներ:
Մեկը սեւ ե, վորպես զինի, մյուսը կարմիր, վորպես
ջրախառն զինի: Յես տոպազներ ունեմ, վոր դեղին
են, վորպես վագրի աչքերը յեւ տոպազներ, վոր
վարդագույն են, վորպես աղաձիւնների աչքերը յեւ
տոպազներ, վոր կանաչ են, վորպես կառուների
աչքերը: Յես փոպալներ ունեմ, վորոնք միշտ փայլում
են բոցով յեւ փոպալներ, վորոնք սիրտ են տխրեցնում
յեւ վախենում են մութից: Յես ունեմ յեղնկաքարեր,
վոր մեռած կնոջ բիբերի յին նման, յես ունեմ լուսնա-
քարեր, վորոնք փոխվում են, յերբ լուսնյակն ե
փոխվում յեւ գունատվում են յերբ արեւն են տեսնում:
Յես ունեմ շափուղներ, վոր ձվի չափ խոշոր են յեւ
կապույտ են, վորպես կապույտ ծաղիկները: Նրանց
մեջ ծովն ե տատանվում յեւ լուսինը բնաւ չի պղտո-
րում նրա ալիքների կապույտը: Յես ունեմ փոսկե-
քարեր յեւ կապույտ զմրուխտներ, յես ունեմ փոսկե-
պրստներ ու սուտակներ, յես ունեմ սարդիյոններ յեւ
հակինթներ, յեւ քաղբեդոնի քարեր յեւ յես ձեզ կտամ
այդ բոլորը, այո՛, բոլորը յեւ կախեցնեմ դրան այլ
բաներ յեւ: Հնդկաստանի թագավորը, նորեքս թու-
թակների փետուրներից հյուսված մի հովանար ե
ուղարկել ինձ: Նումիդայի թագավորը՝ մի զգեստ, վոր
ջայլամների փետուրներից ե հյուսված: Յես ունեմ
մի բյուրեղ, վորին նայելը կանանց արգելված ե, նույն
իսկ պատանիները չեն կարող նայել առանց նախորդ
գանահարության յենթարկվելու: Մի սաղափյա արկ-

դուժ յնս ունեւմ յերեք սքանչելի փերուգ: Յեթն այդ փերուգները ճակատիդ կրես՝ կարող ես յերեւակայել այնպիսի բաներ, վորոնք գոյութիւն չունեն, իսկ յեթն ձեռքիդ վրա կրես, կարելի չես կանանց անպտուղ դարձնել: Դրանք մեծարժեք գանձեր են: Անգին գանձեր են դրանք: Յեւ այդ բոլորը չես: Յերենյա մի արկղիկում յես ունեւմ սաթի գաւաթներ, վոր վոսկեղեն խնձորների յ'ն նման: Յեթն այդ գաւաթների մեջ մի թշնամի թույն ածե՛ նրանք արծաթյա խնձորների նման են դառնում: Մի սաթազարդ արկղում յես ունեւմ յերկու սանդալ վոր ապակիյով են պատած: Յես ունեւմ վերնագգեստներ Սեուացոց յերկրներից յեւ ապարանջաններ կարմիր հակինթներով զարդարւած յեւ համկաքարերով, վոր Յեփրատ քաղաքից են բերում... վերջապես ի՞նչ ես ուզում, Սալոմոն: Ասա՛ ինձ, ի՞նչ ես ցանկանում՝ յեւ յես կտամ քեզ: Յես քեզ կտամ բոլորը, ինչ յեւ կամենաս, բացի միայն մի բանից: Յես քեզ կտամ ամեն ինչ, վոր կարող եմ, բացի մի կյանքից: Յես քեզ կտամ բահանայապետի վերարկուն: Յես քեզ արքայանի վարագույրը կտամ:

ՀՐԵՑԱՆԵՐ

Ո՛հ, ո՛հ...

ՍԱԼՈՄՆ

Տուր ինձ Յոբանաանի գլուխը:

ՀԵՐՈՎԴ ԻՐ ԱՅՈՒԹԻ ՄԵՋ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Տվեք սրան, ինչ վոր պահանջում ե: Իրա՛վ վոր իր մոր դուստրն ե սա: Առաջին զինվորը մոտենում ե: Հերովդիսայան հանում ե տետրաբրի մատից մահվան մատանին յեւ տալիս ե զինվորին:

վորն անմիջապէս տա՛ում ե այն դահին: Դահի՛նը զարհուրած մարդու կերպարանք ունի: Ո՞վ վերցրեց իմ մատանին: Իմ աջ ձեռքին մի մատանի կար: Ո՞վ խմեց իմ գինին: Իմ գաւաթում գինի կար, գինիյով լիքն եր իմ գաւաթը: Մեկը խմեց այն: Ո՛, յես հաշտացած եմ, վոր մեկին դժբախտութիւն պիտի պատահի: Դահի՛նը ջրհորն ե իջնում: Ա՛հ, ինչո՞ւ յես խոսք տալի: Թագավորները յերբեք խոսք չպիտի տան: Յեթն նրանք իրենց խոսքը չեն պահում՝ սարսափելի յես, յեթն պահում են՝ նույնպէս սարսափելի յես:

ՀԵՐՈՎԴԻ ՅԱԴԱ

Իմ կարծիքով դուստրս լավ վարվեց:

ՀԵՐՈՎԴ

Յես համոզւած եմ, վոր մի դժբախտութիւն պիտի գա:

ՍԱԼՈՄՆ Յերկում ե դեպի ջրհորն ու ականջ ե դնում:

Վոչ մի ձայն չկա: Յես վաչինչ չեմ լսում: Ինչպէս ե, վոր չի ճշում նա, այդ մարդը: Ա՛հ, յեթն մեկն ուզենար ինձ սպանել՝ յես կճչայի, կմաքառայի, չեյի ուզենա տանջվի: Զա՛րկ, զա՛րկ, Նասաման: Զա՛րկ, ասում եմ քեզ... Վո՛չ, յես չ'ոչինչ չեմ լսում: Մի դժնի լուծիւն ե տիրում այնտեղ: Ա՛հ, մի բան գետին ընկավ: Յես լսեցի, մի բան ընկավ: Դահի՛ն սուրն եր այդ: Նա վախենում ե, այդ ստրուկը: Թույլ տվեց վոր սուրը ցած ընկնի: Դահի՛նը չի համարձակւում սպանել նրան: Թուլամորթ ե այդ ստրուկը: Զինվորներ պետք ե ուղարկել: Նկատելով Հերովդիսայան մանկավիհին՝ դիմում ե նրան: Յեկ այստե՛ղ: Դու նրա՛ ընկերն ես, վոր մեռավ, այնպէս

չն: Դեռ բալական չեն մեռնները: Ասացեր զինվոր-
ներին, վոր ցած իջնեն ու բերեն այն, ինչ յես պահան-
ջում եմ, ա՛յն, ինչ տետրարքը խոստացել և ինձ, ա՛յն,
ինչ ինձ և պատկանում: Մանկավիճը հետ և բաշվում, Սալոմեն
զինվորներին և դիմում: Զինվորներ, այստեղ յեկեք: Լեզբ
ջրհորն ու բերե՛ք ինձ այն մարդու գլուխը: Զինվորները
հետ են բաշվում: Տետրա՛րք, տետրա՛րք, հրամայեցեր ձեր
զինվորներին վոր բերեն Յոքանաանի գլուխը: Մի մեծ,
սեվ ձեռք՝ դահճի ձեռքը, յերկում և չրհորից Յոքանաանի գլուխն
արծաթյա վահանի վրա պահած: Սալոմեն խլում և այն: Հերովը վերնա-
զգեստով ծածկում և իր յերեսը: Հերովդիպական ծիծաղում և յեվ
հովհարով ինքն իրեն հովհարում: Նազովրեցիք ծունկ են չորում յեվ
սկսում են աղոթել: Ահ, դու չուզեցիր թույլ տալ, վոր յես
համբուրեմ քո բերանը, Յոքանաան: Ահա, կհամբուրեմ
յես ա՛յժմ: Կկծեմ իմ ատամներով, ինչպես հասած
պտուղն են կծում: Այո՛, յես կհամբուրեմ քո բերանը
Յոքանաան: Յես ասացի այդ, այնպես չե՞, յես քեզ
ասացի այդ: Ահա յես կհամբուրեմ այժմ... Բայց
ինչո՞ւ դու ինձ չես նայում, Յոքանաան: Բո աչքերը,
վոր այնպես սարսափելի յեյին, վոր այնպես լի յեյին
զայրույթով ու արհամարանքով, ահա փակված են:
Բայց քո աչքերը: Բարձրացրո՞ւ քո թերթիչները, Յոքա-
նաան: Ինչո՞ւ չես նայում: Մի՞թե դու վախենում ես
ինձնից, Յոքանաան, վոր չես ուզում նայել ինձ: Յեվ
քո լեզուն, վոր կարմիր ոձի յեր նման, թույն թափող
մի ոձի, այլև իս չի շարժվում, այլև իս փոխինչ չի ասում,
Յոքանաան, այն կարմիր իժը, վոր իմ վրա յեր
թափում իր թույնը: Տարորինակ և դա, այնպես չե՞:
Ինչպե՞ս յեղալ, վոր կարմիր իժն այլևս չի շարժվում:
Դու ինձ չուզեցիր, Յոքանաան: Դու ինձ մերժեցիր:
Դու անարգ խոսքեր ասացիր ինձ: Դու ինձ հետ վար-

վեցիր, վորպես մի ստրկուհու, վորպես մի պոռնիկ
կնոջ հետ, ի՛նձ, Սալոմեյա, Հերովդիպադայի դստեր,
Հրեյաստանի արքայադստեր հետ: Յեվ ահա՛, Յոքա-
նաան, յես դեռ ապրում եմ, իսկ դու մեռած ես յեվ
քո գլուխն ինձ և պատկանում: Յեվ ինչ կամենամ
կարող եմ անել: Յես կարող եմ քո գլուխը շներին
նետել, նետել ողի թռչուններին: Այն ինչ կթողնեն
շները, կուտեն ողի թռչունները: Ահ, Յոքանաան,
Յոքանաան, դու միյակ մարդն եյիր վորին յես սիրում
եյի: Միացած բոլոր մարդիկ զգվանք են ներշնչում
ինձ: Բայց դու, դու՝ գեղեցիկ եյիր: Բո մարմինը
փղոսկրյա մի սյուն եր արծաթյա պատվանդանի վրա:
Նա մի այգի յեր լի աղավիհներով յեվ արծաթյա
շուշաններով: Նա արծաթյա աշտարակ եր փղոսկրյա
վահաններով զարդարված: Աշխարհում չկար փոխինչ,
վոր ավելի սպիտակ լիներ, քան քո մարմինը: Աշխարհում
չկար փոխինչ, վոր այնպես սեվ լիներ, վորպես քո
մազերը: Աշխարհում չկար փոխինչ, վոր այնպես կարմիր
լիներ, ինչպես քո բերանը: Բո ձայնը մի բուրվառ եր,
վոր արտասովոր բուրմունք եր սփռում յեվ յերը յես
լսում եյի քեզ, մի արտասովոր յերաժշտություն եյի
լսում: Ահ, ինչո՞ւ դու ինձ չնայեցիր, Յոքանաան: Բո
ծեռների յեվ հայհոյանքների հետևիլ պահեցիր դու քո
դեմքը: Դու քո աչքերը կապեցիր այն մարդու կապով,
վորն ուզում և իր Աստծուն տեսնել: Յեվ ահա դու
տեսար նրան, քո Աստծուն, Յոքանաան, բայց ի՛նձ,
ինձ դու յերբեք չտեսար: Յեթե տեսնեիր ինձ
— կսիրեիր դու: Յես քեզ տեսա, Յոքանաան յեվ
սիրեցի քեզ: Լե՛հ, ինչպես սիրեցի յես քեզ: Յես դարձյալ
սիրում եմ քեզ, Յոքանաան: Յես փոչ փոքի չեմ
սիրում քացի քեզնից... Յես ծարավ եմ քո գեղեց-

կուլթյան: Յես քաղցած եմ քո մարմնին: Յեվ փոշ
գինին, փոշ պտուղները չեն կարող հագեցնել իմ ցան-
կուլթյունը: Ի՞նչ անեմ հիմա, Յորանաան: Վոչ գետերը,
փոշ մեծագույն ջրերը չեն կարող հագեցնել իմ ցան-
կուլթյունը: Յես մի կույս եյի յեվ դու զրկեցիր ինձ
կուսուլթյունիցս: Յես փխջախոհ եյի յեվ դու հուր
լցրիր իմ յերակների մեջ: Ահ, ահ, ինչո՞ւ դու չտեսար
ինձ, Յորանաան: Յեթե դու տեսնեիր ինձ՝ կսիրեիր:
Յես լավ գիտեմ փոր կսիրեիր ինձ յեվ սիրո խորհուրդն
ավելի մեծ ե, քան մահվան խորհուրդը: Միշտ սիրո
փրա պետք ե նայել:

ՀԵՐՈՉԴ

Նա հրեշտիոր ե, քո դուստրը, նա բոլորովին
հրեշ ե: Նրա արածը մեծ մեղք ե: Յես համոզված եմ,
փոր դա մեծ մեղք ե անհայտ Աստծո դեմ:

ՀԵՐՈՎԴԻՅԱԴԱ

Ինձ դուր ե գալիս իմ դստեր արածը յեվ այժմ
ուզում եմ այստեղ մնալ:

ՀԵՐՈՎԴ

Ահ, ազգապիղծ կինն ե խոսում: Գնա՛նք: Յես
ալիքս այստեղ մնալ չեմ ուզում: Գնա՛նք, ասում եմ
յես քեզ: Յես համոզված եմ, փոր դժբախտուլթյուն
պիտի պատահի: Մանասե՛, Իսախա՛ր, Ոգիյա՛, ջահերը
հանգցրե՛ք: Յես չեմ ուզում, փոր առարկաներն ինձ
նային: Հանգցրե՛ք, ջահերը: Թագցրե՛ք լուսնյակը: Թագ-
ցրե՛ք աստղերը: Թագնվե՛նք մեր պալատում, Հերով-
դիյադա: Յես պիտեմ եմ՝ վախենալ:

Ստրվները հանգցնում են ջահերը: Աստղերը չբանում են: Մի մեծ,
եկվ ամպ ե անցնում լուսնի վրայով յեվ բոլորովին ծածկում ե նրան:
Բեմի վրա անձախանց իսավար ե իջնում: Տեսրարքն սկսում ե տանդուխ-
տով՝ վեր բարձրանալ:

ՍԱԼՈՄՆՑԻ ԶԱՅՆԸ

Ահ, յես համբուրեցի քո բերանը, Յորանաան, յես
համբուրեցի քո բերանը: Դառնահամ են քո շրթունք-
ները: Մի՞թե արյան համն ե այդ: Դուցե սիրո՞ համն
ե: Ասում են, փոր սերը դառնահամ ե: Բայց ի՞նչ
փույթ . . . ի՞նչ փույթ . . . յես համբուրեցի քո բերանը,
Յորանաան: Յես համբուրեցի քո բերանը:

Լուսնի մի շող ընկնում ե Սալոմեյի վրա յեվ լուսավորում նրան:

ՀԵՐՈՎԴ Հեռ ե նայում յեվ տեսնում ե Սալոմեյին:

Սպանեցե՛ք այդ կնոջը:

Զինվորները հարձակվում են յեվ իրենց վահաններով ջախջախում են
Սալոմեյին, դստեր Հերովդիյադայի, արքայադստերը Հրեյաստանի:

Գիրք 25 Կ.